

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԿԱՐԻՆԵ ԱՐՄԵՆԻ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

«ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ» ԴԱՍԸՆԹԱՅԻ

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐ

ԵՐԵՎԱՆ
ՏՆՏԵՍԱԳԵՏ
2020

ՀՏԴ 336.22(042.4)
ԳՄԴ 65.261.4g7
Մ 780

Հրատարակության են երաշխավորել
ՀՊՏՀ ֆինանսական ֆակուլտետի խորհուրդը և ֆինանսների ամբիոնը

Մասնագիտական խմբագիր՝

Ա. Բ. Սալնազարյան,
տ.գ.դ., պրոֆեսոր

Գրախոսներ՝

Ա. Վ. Ներսիսյան,
տ.գ.թ., դոցենտ

Ա. Լ. Պետրոսյան,
տ.գ.թ., հարկ վճարողի
փաստաբանի գրասենյակի
տնօրեն, հարկային
ծառայության առաջին դասի
խորհրդական

Վ. Վ. Մկրտչյան,
տ.գ.թ., ՀՀ ԱԺ աշխատակազմի
ղեկավարի օգնական

Միքայելյան Կ. Ա.

Մ 780 Հարկային համակարգ: Դասախոսության նյութեր/ Կ. Ա. Միքայելյան.- Եր.:
Տնտեսագետ, 2020.- 78 էջ:

Դասախոսության նյութերը կազմված են ՀՊՏՀ «Հարկային համակարգ» դասընթացի կրթական ծրագրին համապատասխան: Ներկայացվել և պարզաբանվել են հարկային համակարգին վերաբերող հիմնական գործընթացները, ՀՀ հարկային օրենսգրքի՝ առանձին հարկատեսակներին վերաբերող կարևոր դրույթները, ինչպես նաև ոլորտին վերաբերող այլ հիմնախնդիրներ:

Գրքում ներառված տեղեկություններն իրապես օգտակար և հետաքրքրական կարող են լինել ոչ միայն ՀՊՏՀ, այլև մյուս բուհերի տնտեսագիտական մասնագիտությունների ուսանողների, հարկային մարմինների աշխատակիցների և հարկային համակարգին առնչվող անձանց համար:

ՀՏԴ 336.22(042.4)
ԳՄԴ 65.261.4g7

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Հարկերի սոցիալ-տնտեսական էությունը.....	4
2. ՀՀ հարկային համակարգի ընդհանուր բնութագիրը: Հարկային վարչարարություն.....	12
3. Հարկերի և վճարների համակարգը.....	22
4. Ավելացված արժեքի հարկ	28
5. Ակցիզային հարկ	33
6. Շահութահարկ.....	36
7. Եկամտային հարկ.....	44
8. Բնապահպանական հարկ.....	48
9. Ճանապարհային հարկ	50
10. Բնօգտագործման վճար	52
11. Անշարժ գույքի հարկ.....	53
12. Փոխադրամիջոցների գույքահարկ	57
13. Շրջանառության հարկ	60
14. Միկրոձեռնարկատիրության համակարգը	62
15. Պետական տուրք.....	68
16. Տեղական տուրքեր և վճարներ.....	70
17. Միջազգային հարկային համաձայնագրեր.....	72
Օգտագործված գրականության ցանկ	75
Առաջարկվող գրականություն	76
Հավելված.....	77

1. ՀԱՐԿԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՐԿԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Հարկերը ֆիզիկական և իրավաբանական անձանց պարտադիր վճարումներն են, որոնք գանձվում են պետության կողմից և ուղղվում հանրային նպատակների ապահովմանը:

Պատմականորեն՝ հարկերն առաջացել են պետության և դասակարգերի ծագման հետ միաժամանակ: Հարկումն անցել է զարգացման երկար ուղի: Վաղ շրջանում դրանք գանձվել են բնամթերային ձևով, իսկ հետագայում, ապրանքադրամական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց, տիրապետող է դարձել դրանց գանձման դրամական եղանակը: Ներկայում հարկերը պետական բյուջեի եկամուտների մեծամասնությունն են, այսինքն՝ պետության ֆինանսական հարաբերությունները կազմակերպությունների և բնակչության հետ կառուցվում են հարկային սկզբունքների հիման վրա¹:

Ուսումնասիրենք հարկերի ձևավորման գործընթացը: Համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) և ազգային եկամտի (ԱԵ) բաշխման, հատկապես վերջինիս վերաբաշխման ժամանակ գոյանում և գործում են ֆինանսական հարաբերություններ, հետևապես՝ առաջանում են հարկային հարաբերություններ պետության և բնակչության միջև: Հարկերը, մասնակցելով նոր արժեքի բաշխմանը, հանդես են գալիս որպես վերարտադրության գործընթացի մի մաս՝ արտադրական հարաբերությունների մի յուրահատուկ ձև, որն էլ ձևավորում է դրանց հասարակական բովանդակությունը: Մասնակցելով ԱԵ-ի վերաբաշխմանը՝ հարկային հարաբերությունները ենթակա են նյութական արտադրության առաջնային հարաբերություններին, այսինքն, բացի հասարակական բովանդակությունից, հարկերն ունեն նյութական հիմքեր: Դրանք հասարակության դրամական եկամուտների մի մասն են, որ օտարվում և յուրացվում են պետության կողմից, ինչն էլ հարկերի նյութական բովանդակությունն է: Այսպիսով՝ հարկերն ունեն երկակի բնույթ՝ հանդես գալով որպես.

¹ Кузнецова Н.Г., Налоговая система, М., 2016, стр. 13.

1. արտադրական հարաբերությունների յուրահատուկ ձև (հասարակական բովանդակություն),
2. ԱԵ-ի արժեքի մի մաս՝ դրամական արտահայտությամբ (նյութական բովանդակություն)²:

Հարկերին բնորոշ են մի շարք հատկանիշներ.

1. համապարտադիր լինելը (պետության կողմից հարկ վճարողին կարգադրություն),
2. անհատույց լինելը (վճարողը հարկի դիմաց չի ստանում որևէ նյութական, տնտեսական կամ այլ իրավունք),
3. անվերադարձելիությունը (հարկային վճարները դիմագրկվում են, չեն վերադարձվում տվյալ վճարողին):

ՀԱՐԿԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Հարկերը ոչ միայն յուրահատուկ տնտեսական (կայուն ներքին հատկանիշներով, զարգացման օրինաչափություններով և դրսևորման տարբեր ձևերով), այլև ֆինանսական կատեգորիա են, որոնք ունեն օբյեկտիվ բնույթ, արտահայտում են իրական ֆինանսական հարաբերություններ և սերտ կապի մեջ են մյուս ֆինանսական կատեգորիաների հետ (պետական բյուջե):

Հարկերը կադարում են հետևյալ գործառույթները.³

1. **Ֆիսկալ**. պատմականորեն առաջինն ու հիմնականն է: Հարկերի օգնությամբ ձևավորվում են պետության ֆինանսական ռեսուրսները, որոնք էլ ապահովում են տնտեսության ոլորտում պետության մասնակցությունը և պայմանավորում վերջինիս տնտեսական գործառույթը:

2. **Տնտեսական (կարգավորող)**. տնտեսության պետական կարգավորման բաղկացուցիչ տարրն է: Հարկերը, որպես վերաբաշխման գործընթացի ակտիվ մասնակիցներ, լուրջ ազդեցություն են գործում վերարտադրության վրա՝ խթանելով կամ զսպելով դրա տեմպերը, ուժեղացնելով կամ թուլացնելով կապիտալի

² Черник Д. Г., Налоги и налогообложение, М., 2018, стр. 8.

³ Հարությունյան Վ., Հարկեր և հարկազանձում, Եր., 2010, էջ 58:

կուտակումը, ընդլայնելով կամ նեղացնելով բնակչության վճարունակ պահանջարկը:

3. **Սոցիալական.** դրսևորվում է սոցիալական ապահովության և սոցիալական ապահովագրության աջակցության նպատակով, հարկային մեթոդների կիրառմամբ, ուստի այն զեղչերը, որոնք կիրառվում են պետական սոցիալական, արտաբյուջետային ֆոնդեր կամ բարեգործական նպատակներով գումարներ փոխանցելիս, անմիջականորեն ուղղված են այս գործառույթի գործողությանը: Ըստ այս գործառույթի՝ հարկային մուտքերի հաշվին ֆինանսավորվում են նաև պետության սոցիալական ծրագրերը:

Վերը նշված գործառույթները փոխկապված և փոխապայմանավորված են:

ՀԱՐԿԵՐԻ ԴԵՐԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Պետության հարկային համակարգը համարվում է արդյունավետ, եթե ապահովում է հարկային մուտքեր բյուջե այն ծավալով, որպեսզի բավարարի իր գործառույթների իրականացումը: Տնտեսագիտական գրականության մեջ գոյություն ունեն տարբեր ցուցանիշներ⁴, որոնք պատկերացում են տալիս երկրի հարկային համակարգի արդյունավետության մասին, մասնավորապես՝

1. ՀՆԱ արժեքում հարկերի տեսակարար կշռի ցուցանիշ կամ հարկային բեռի (գանձված հարկեր/ՀՆԱ) մեծություն տնտեսության մեջ (զարգացած երկրներում՝ 30-55%, Հայաստանում՝ 21-23%),
2. բյուջեի եկամուտներում հարկային մուտքերի բաժին (շատ երկրներում՝ 90%, Հայաստանում 2014 թ.-ից հետո՝ մոտ 97-98%),
3. ֆիզիկական և իրավաբանական անձանցից հավաքագրված հարկերի հարաբերակցության ցուցանիշ և այլն:

Երկրի զարգացածության մակարդակից կախված՝ այս ցուցանիշներն արմատապես տարբերվում են: Զարգացած երկրներում հարկերը հիմնականում հավաքագրվում են քաղաքացիների եկամուտներից: Հայաստանում հարկման հիմնա-

⁴ Алавердян А., Адамян С., Основы налоговой системы Армении, Ер., 2006, стр. 16.

կան ծանրությունը կազմակերպությունների վրա է. ֆիզիկական անձանց հարկային վճարները մեծ չեն:

ՀԱՐԿՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ

Հարկային համակարգի հիմքում մեկ հիմնական սկզբունք է. ծառայել հասարակության զարգացմանն ու նրա շահերին: Գոյություն ունեն նաև հարկման դասական սկզբունքներ, որոնք ձևակերպել է շոտլանդացի տնտեսագետ Ադամ Սմիթը⁵: Դրանք են.

1. **Արդարության սկզբունք.** հավասարակշռության ապահովում հարկ վճարողների եկամուտների և գանձվող հարկերի միջև: Ըստ այդմ՝ ենթադրվում է, որ հասարակության բոլոր անդամները պետք է մասնակցեն պետության պահպանմանը՝ միաժամանակ, հաշվի առնելով հարկ վճարողների վճարունակությունը: Այս մոտեցումը հանգեցրել է հարկման համակարգի երկու՝ հորիզոնական (բոլորը) և ուղղահայաց (հարուստներն ավելի շատ) տեսությունների առաջացմանը:

2. **Որոշակիության սկզբունք.** հարկերի չափերի նախօրոք սահմանում և որոշակիություն, այսինքն՝ օրենսդրական ակտերում հարկերը պետք է սահմանվեն հստակ կերպով՝ այնպես, որ յուրաքանչյուրն իմանա՝ ի՞նչ հարկ է, որտե՞ղ և որքա՞ն պետք է վճարի:

3. **Հարմարության սկզբունք.** ամեն մի հարկ պետք է գանձվի հարկատուին ամենահարմար ձևով:

4. **Խնայողության սկզբունք.** հարկի գանձման և հարկային վարչարարության հետ կապված ծախսերը պետք է կրճատվեն և հասցվեն նվազագույնի:

Վերոնշյալ դասական սկզբունքների հետ մեկտեղ, հաշվի առնելով հարկման համաշխարհային փորձը, առաջ եկան մի շարք այլ սկզբունքներ ևս, որոնցից են.

1. հարկի օրենսդրական ներդրման սկզբունքը,
2. կրկնակի հարկման բացառման սկզբունքը,
3. հարկային խտրականություն թույլ չտալու սկզբունքը:

⁵ Попова Л. В., Дрожжина И. А., Маслов Б. Г., Налоговые системы зарубежных стран, М., 2011, стр. 20.

Կայուն հարկային համակարգ ունենալու համար վերոնշյալ սկզբունքների պահպանումն անհրաժեշտ է:

Հարկերի վերաբերյալ հազարամյակների պատմությունը հանգել է հարկային համակարգի կառուցման երեք հիմնական տարբերակների.⁶

ա) աճող (պրոգրեսիվ, ուղղահայաց). հարկի դրույքաչափը և պետությանը տրվող բաժինն աճում են հարկվող եկամուտների և գույքի արժեքի մեծության աճին համապատասխան (փոխադրամիջոցների գույքահարկ),

բ) համամասնական (հորիզոնական). կիրառվում է հարկի միասնական դրույքաչափ՝ անկախ հարկվող օբյեկտի մեծությունից (շահութահարկ),

գ) հեղինթաց (ռեգրեսիվ). կիրառվում է նվազող դրույքաչափ՝ հարկվող եկամտի մեծության աճին համապատասխան (սոցվճար):

Հարկման համակարգերից յուրաքանչյուրն ունի և՛ առավելություններ, և՛ թե-րություններ: Բոլոր երկրներն էլ եկամուտները բյուջեում հավաքագրում են ոչ թե մեկ, այլ տարբեր հարկերի օգնությամբ:

ՀԱՐԿԻ ԵՎ ՎՃԱՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Հարկը և վճարը համարվում են սահմանված միայն այն դեպքում, երբ որոշված են հետևյալ փարրերը.⁷

1. **Հարկ վճարողների շրջանակը.** կազմակերպություն կամ ֆիզիկական անձ (այդ թվում՝ ԱԶ, Նոտար), որը սահմանված դեպքերում ունի կամ կարող է ունենալ հարկ կամ վճար վճարելու պարտավորություն:

2. **Հարկման օբյեկտը.** յուրաքանչյուր գործարք, եկամուտ, գույք, գործունեության տեսակ կամ այլ օբյեկտ, որի առկայությունը կամ որի նկատմամբ սեփականության իրավունքի առկայությունը կամ որի կատարումը հարկ վճարողի համար առաջացնում է հարկի հաշվարկման կամ վճարման պարտավորություն: Յուրաքանչյուր հարկի համար սահմանվում է հարկման առանձին օբյեկտ: Հարկման

⁶ **Алавердян А., Адамян С.,** Основы налоговой системы Армении, Ер., 2006, стр. 19.

⁷ ՀՀ հարկային օրենսգիրք, ընդ. 04.10.2016 թ., հոդ. 9:

մինչև նույն օբյեկտը հաշվետու ժամանակաշրջանում նույն հարկ վճարողի մոտ նույն տեսակի հարկով հարկվում է միայն մեկ անգամ:

3. **Հարկման բազան.** հարկման օբյեկտի արժեքային, ֆիզիկական կամ այլ բնութագիրն է:

4. **Հարկի դրույքաչափը.** այն արժեքային (տոկոսային) և (կամ) հաստատուն մեծությունն է, որը կիրառվում է հարկման բազայի նկատմամբ՝ հարկի չափը որոշելու համար:

5. **Հարկի հաշվարկման կարգը.** կատարվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի (ամիս, եռամսյակ, կիսամյակ, տարի) համար: Դա մի ժամանակահատված է, որի համար հաշվարկվում և վճարվում են հարկեր, ներկայացվում հարկային հաշվարկներ, կատարվում այլ պարտավորություններ: Հարկի հաշվարկը կատարում են հարկ վճարողներն ինքնուրույնաբար, սահմանված դեպքերում՝ հարկային գործակալները,

6. **Հարկի վճարման կարգը և ժամկետները.** վճարումը կատարվում է հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո (սահմանված դեպքերում՝ նաև կանխավճարների տեսքով՝ մինչև հաշվետու ժամանակաշրջանի ավարտը):

Ըստ Օրենսգրքի կամ ՀՀ օրենքների՝ կարող են սահմանվել հարկային արտոնությունների հետևյալ տեսակները.

1. հարկից ազատում,
2. հարկման օբյեկտի նվազեցում,
3. հարկման բազայի նվազեցում,
4. հարկի դրույքաչափի նվազեցում,
5. հարկի նվազեցում,
6. հարկի վճարման ժամկետի հետաձգում,
7. Օրենսգրքով սահմանված տույժերից և տուգանքներից ազատում, նվազեցում, վճարման ժամկետների հետաձգում⁸:

⁸ ՀՀ հարկային օրենսգիրք, ընդ. 04.10.2016 թ., հոդ. 19:

ՀԱՐԿԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Հարկային աշխատանքների կազմակերպման համար կարևոր նշանակություն ունի հարկերի դասակարգումը, որի անհրաժեշտությունը պայմանավորված է հարկատեսակների բազմազանությամբ: Հարկային դասակարգմամբ պարզաբանվում է հարկերի դերը պետական և համայնքային բյուջեների ձևավորման գործում: Հարկերը դասակարգվում են՝ ելնելով հետևյալ հատկանիշներից.⁹

1. վճարող սուբյեկտ՝

- ա) ֆիզիկական անձ
- բ) իրավաբանական անձ

2. կառավարման մակարդակ՝

- ա) տեղական
- բ) պետական

3. գանձման եղանակ՝

- ա) ուղղակի
- բ) անուղղակի

4. հարկման եղանակ՝

- ա) վարչական
- բ) ըստ հայտարարագրման

5. նշանակություն՝

- ա) ընդհանուր
- բ) հատուկ:

Ուղղակի հարկերը ներառվում են ապրանքի արժեքում և գանձվում հարկ վճարողներից անմիջականորեն՝ ըստ ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների, կապիտալի օգտագործման, գույքի արժեքի: Ուղղակի հարկով հարկվում են գույքը և եկամուտները:

Անուղղակի հարկերն արժեքից դուրս մեծություն են, գնի վերադիր և ուղղակիորեն կապված չեն տնտեսական գործունեության ֆինանսական արդյունքների հետ: Անուղղակի հարկ վճարող են համարվում ապրանքների գնորդները, որոնք

⁹ Մարտիրոսյան Բ., Հարկեր և հարկազանձում, Եր., 2015, էջ 72:

հանդես են գալիս որպես հարկային բեռի կրողներ: Անուղղակի հարկ է գանձվում լայն սպառման ապրանքների վաճառքից, աշխատանքներից և ծառայություններից՝ ապրանքների գների և ծառայությունների սակագների բարձրացմամբ:

Տարբերում են նաև դինամիկ և ստատիկ հարկեր, որոնք կախված չեն սուբյեկտի տնտեսական գործունեությունից (փոխադրամիջոցների գույքահարկ, անշարժ գույքի հարկ):

Միջազգային փորձում առավել կիրառելի են Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀՀԿ) և Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ), ինչպես նաև Ազգային հաշիվների համակարգի (ԱՀՀ) և Տնտեսական ինտեգրված հաշիվների եվրոպական համակարգի դասակարգումները¹⁰:

ՀԱՐԿԵՐԻ ԳԱՆՁՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Հարկային փորձում ձևավորվել են հարկերի գանձման մի շարք եղանակներ¹¹

1. **Կադաստրային.** ենթադրում է կադաստրի օգտագործում: Դա մի ռեեստր է, որ պարունակում է տիպային տեղեկությունների ցուցակ (հող, եկամուտ)՝ դասակարգված արտաքին հատկանիշներով (հողի կադաստրի դեպքում՝ հողակտորի չափը, հեռավորությունը տրանսպորտային գծերից, շուկայից) և սահմանում հարկման օբյեկտի միջին եկամտաբերությունը:

2. **Հարկերի պահում՝ մինչև սուբյեկտի եկամուտ ստանալը (աղբյուրի մոտ).** դասական օրինակ է, երբ հաշվապահությունը հաշվարկում և պահում է հարկ՝ մինչև եկամտի տրամադրումը: Առավելությունն այն է, որ անհնարին է հարկի վճարումից խուսափելը:

3. **Ըստ հայտարարագրման կարգի.** հարկերի գանձում սուբյեկտից՝ եկամուտ ստանալուց հետո: Հարկատուն հարկային մարմին է ներկայացնում հայտարարագիր իր բոլոր եկամուտների վերաբերյալ, որից ելնելով էլ, ըստ հարկվող օբյեկտի մեծության և տարեկան դրույքաչափի, որոշվում է հարկի գումարը:

¹⁰ **Алавердян А., Адамян С.,** Основы налоговой системы Армении, Ер., 2006, стр. 32.

¹¹ Նույն տեղում, էջ 40:

4. **Գանձում գնումների համար եկամուտների ծախսման ժամանակ.** անմիջականորեն վճարում է գնորդը՝ դառնալով հարկի կրող (ԱԱՀ, ակցիզային հարկ):

5. **Գանձում սպառման գործընթացի ժամանակ.** հիմնականում ճանապարհային վճար է, որ գանձվում է ավտոմոբիլային տրանսպորտի սեփականատերերից:

2. ՀՀ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ԴՐԱ ՏԱՐԵՐԸ

Հարկային համակարգը հարկային օրենսդրության, հարկային վարչարարության և հարկ վճարողի ինստիտուտի ամբողջությունն է և դրանց միջև հարաբերությունները: ՀՀ-ում գործում է միասնական հարկային համակարգ՝ հիմնված հետևյալ սկզբունքների¹² վրա.

1. **պարզություն և հստակություն՝** իրավական ակտերը հարկ վճարողների և հարկային մարմինների համար պետք է լինեն պարզ, հստակ և իրենց մեջ չպարունակեն հակասություններ և անորոշություններ.

2. **համախմբվածություն՝** իրավական ակտերը պետք է լինեն համախմբված, և պետք է խուսափել առանձին իրավական ակտերով հարկային հարաբերությունների կարգավորումից.

3. **հավասարություն՝** իրավական ակտերը պետք է հավասարապես կիրառվեն բոլոր հարկ վճարողների նկատմամբ՝ անկախ նրանց գործունեության ոլորտից, տարածքային պատկանելությունից.

4. **խորականության բացակայություն՝** հարկերի ու վճարների կիրառությունը և հարկային վարչարարությունը չպետք է ունենան խտրական բնույթ.

5. **համապարփադիրություն՝** բոլոր հարկ վճարողները պարտավոր են սահմանված դեպքերում, կարգով և չափով հաշվարկել և վճարել հարկեր ու վճարներ.

¹² ՀՀ հարկային օրենսգիրք, ընդ. 04.10.2016 թ., հոդ. 3:

6. **Թափանցիկություն և հաշվետվողականություն**¹³ հարկային վարչարարությունը պետք է լինի թափանցիկ, հրապարակային և այլն:

ՀՀ հարկային օրենսգիրքն ընդունվել է 2016 թ. հոկտեմբերի 4-ին, գործողության մեջ մտել 2018 թ. հունվարի 1-ին: Այն բաղկացած է 3 մասից.

1. **ընդհանուր մաս**. ներկայացված են ընդհանուր դրույթներ, հասկացություններ, հարկերի և վճարների համակարգեր և այլն,

2. **հատուկ մաս**. ներկայացված են հարկերը և վճարները,

3. **հարկային վարչարարության մաս**. ներկայացված են հարկ վճարողների հաշվառումը, սպասարկումը և այլն:

Հարկային պարտավորությունների դրույթը սահմանադրական է (հոդված 45), որտեղ ասվում է, որ յուրաքանչյուր անձ պարտավոր է սահմանված կարգով և չափով վճարել հարկեր, տուրքեր և այլ պարտադիր վճարներ:

Հարկային վարչարարությունն այն գործիքների ամբողջությունն է, ներառյալ պատկան մարմինները, որոնք ապահովում են սահմանված չափով և ժամկետներում հարկերի վճարում համապատասխան բյուջե:

Հարկ վճարողները կազմակերպություններ են կամ ֆիզիկական անձինք (այդ թվում ԱԶ, նոտար), որոնք սահմանված դեպքերում ունեն կամ կարող են ունենալ հարկ կամ վճար վճարելու պարտավորություն:

Կազմակերպություններ¹³ են համարվում.

1. ՀՀ-ն՝ ի դեմս պետական կառավարչական հիմնարկների, ՀՀ համայնքները՝ ի դեմս համայնքային կառավարչական հիմնարկների, ՀՀ կենտրոնական բանկը, ՀՀ-ում պետական գրանցում ստացած իրավաբանական անձինք, ՀՀ-ում հաշվառված հիմնարկները.

2. օտարերկրյա պետությունում գրանցված կազմակերպությունները.

3. միջազգային կազմակերպությունները.

4. ներդրումային ֆոնդերը (հիմնադրամները) :

¹³ ՀՀ հարկային օրենսգիրք, ընդ. 04.10.2016թ., հոդ. 21:

ՀՀ ռեզիդենտ կազմակերպություն է համարվում այն կազմակերպությունը, որի գտնվելու վայրը (պետական գրանցման վայրը, հիմնարկի դեպքում պետական հաշվառման վայրը) հանդիսանում է ՀՀ-ն¹⁴:

Ֆիզիկական անձինք են համարվում¹⁵

1. ՀՀ քաղաքացիները.
2. օտարերկրյա քաղաքացիները.
3. քաղաքացիություն չունեցող անձինք:

ՀՀ ռեզիդենտ են համարվում այն ֆիզիկական անձինք, որոնք հարկային տարում ՀՀ-ում փաստացի գտնվել են 183 և ավելի օր, նաև այն ֆիզիկական անձինք, որոնց կենսական շահերի կենտրոնը (տնտեսական կամ ընտանեկան շահեր) ՀՀ-ում է կամ ՀՀ-ում պետական ծառայության մեջ գտնվող ժամանակավորապես ՀՀ տարածքից դուրս աշխատող ֆիզիկական անձինք¹⁶:

Հարկային վճարումները կատարվում են միասնական հաշվին, որը հարկ վճարողների հարկային պարտավորությունների մարման նպատակով գանձապետարանի կողմից վարվող պետական արտաբյուջետային միջոցների ավանդային ենթահաշիվ է: Այդտեղ են փոխանցվում բոլոր հարկերը և վճարները (ներառյալ դրանց գծով հաշվարկված տույժերը և տուգանքները), բացառությամբ ճանապարհային, տեղական, բնապահպանական հարկերի և բնօգտագործման վճարների գծով պարտավորության այն գումարների, որոնց համար, Օրենսգրքի համաձայն, հարկային հաշվարկ ներկայացնելու պահանջ սահմանված չէ:

Հարկային համակարգի ձևավորման առանցքային բաղադրատարրը հարկային քաղաքականությունն է՝ որպես պետության կողմից հարկերի բնագավառում անցկացվող միջոցառումների ամբողջություն և պետության տնտեսական քաղաքականության կարևոր մաս: Դրա կիրառմամբ պետությունն իրականացնում է 2 խնդիր¹⁷

1. Ֆիսկալ պահանջմունքների բավարարում,

¹⁴ Նույն տեղում, հոդ. 22:

¹⁵ Նույն տեղում, հոդ. 24:

¹⁶ ՀՀ հարկային օրենսգիրք, ընդ. 04.10.2016 թ., հոդ. 25:

¹⁷ Մելիքյան Մ., Հարկային քաղաքականության տեսական հիմունքները, Եր., 2013, էջ 83:

2. տնտեսության մակրոկարգավորում:

Հարկային քաղաքականության հիմնական սկզբունքներն են.¹⁸

- եկամուտների ապահովում,
- տնտեսության կարգավորում,
- արդյունավետություն և այլն:

Հարկային ճիշտ քաղաքականության վարումը, հարկային համակարգի ճկուն կառուցակարգերի մշակումն ու կիրառումն ունեն տնտեսական, նաև սոցիալական ու քաղաքական նշանակություն, իսկ հարկային քաղաքականության կատարելագործման գործընթացը կրում է մշտական և շարունակական բնույթ:

ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄՈԴԵԼՆԵՐԸ

Կախված հարկային բեռի բաշխումից՝ համաշխարհային փորձում տարբերում են հարկային համակարգի 4 հիմնական մոդելներ¹⁹.

1. **Անգլո-սաքսոնական.** բնութագրվում է բյուջեի եկամուտների կառուցվածքում ուղղակի հարկերի բարձր տեսակարար կշռով, երբ հարկման ողջ ծանրությունն ընկնում է ֆիզիկական անձանց վրա (Ավստրիա, Բելգիա, Իսպանիա):
2. **Եվրոմայրցամաքային.** բնութագրվում է բյուջեի եկամուտների կառուցվածքում անուղղակի հարկերի, նաև սոցիալական վճարների նշանակալի չափով՝ պայմանավորված եվրոպական երկրների քաղաքականության սոցիալական ուղղվածությամբ (Գերմանիա, Ֆրանսիա, Իտալիա):
3. **Լատինաամերիկյան.** բնութագրվում է բյուջեի եկամուտների կառուցվածքում անուղղակի հարկերի գերակշռությամբ: Կարևոր է այն երկրների համար, որոնք չունեն հարկային վարչարարության արդյունավետ կառուցակարգ, և անուղղակի հարկերը հեշտ են գանձվում և վերահսկվում (Չիլի, Պերու):

¹⁸ Հարությունյան Վ., Հարկային քաղաքականությունը և նրա կատարելագործման հիմնահարցերը ՀՀ-ում, Եր., 2003, էջ 10:

¹⁹ Алавердян А., Адамян С., Основы налоговой системы Армении, Ер., 2006, стр. 46.

4. **Խառը.** համակցում է վերը նշված մոդելների բնորոշ գծերը և բնութագրվում բյուջեի եկամուտների կառուցվածքի տարբերակմամբ և պետությունների՝ տարբեր տեսակի հարկերի օգտագործման կողմնորոշմամբ:

Հարկերի սահմանման ժամանակ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն փաստին, որ հարկային բեռի չափազանց բարձրացումը կարող է հանգեցնել ոչ թե հարկային եկամուտների աճին, այլ նվազմանը, քանի որ մեծանում է հավանականությունը, որ տնտեսավարող սուբյեկտները, կորցնելով արտադրության խթանները, թաքցնեն իրական եկամուտները հարկումից: Նման եզրակացություն է կատարել Արթուր Լաֆերը՝ գծապատկերի միջոցով, որը ստացել է «Լաֆերի կոր» անվանումը, արտացոլելով հարկի դրույքաչափի բարձրացման և բյուջեի հարկային մուտքերի ընդհանուր գումարի միջև փոխկախվածությունը:

ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ:

ՀՀ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

ՀՀ-ում հարկային հարաբերությունները կարգավորվում են ՀՀ սահմանադրությամբ, ՀՀ վավերացված միջազգային պայմանագրերով, Օրենսգրքով, վճարների վերաբերյալ ՀՀ օրենքներով, դրանց հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով²⁰:

Նոր տեսակի հարկի կամ վճարի սահմանում, հարկի կամ վճարի դրույքաչափի բարձրացում նախատեսող ՀՀ օրենքները կարող են ուժի մեջ մտնել դրանց ընդունման օրը ներառող հարկային տարվան հաջորդող հարկային տարվա սկզբին, բայց ոչ շուտ, քան դրանց պաշտոնական հրապարակման օրը ներառող ամսվան հաջորդող յոթերորդ ամսվա սկզբին:

Հարկային արտոնության սահմանում նախատեսող ՀՀ օրենքները կարող են ուժի մեջ մտնել դրանց ընդունման օրը ներառող հարկային տարվան հաջորդող հարկային տարվա սկզբին:

1991 թ. հոկտեմբերի 2-ը համարվում է ՀՀ հարկային տեսչության ստեղծման օր (ՀՀ նախարարների խորհրդի թիվ 585 որոշմամբ ՀՀ նախարարների

²⁰ ՀՀ հարկային օրենսգիրք, ընդ. 04.10.2016 թ., հոդ. 2:

խորհրդին առընթեր ստեղծվեց պետական հարկային տեսչությունը): 1996 թ. հունիսի 15-ին, ըստ ՀՀ նախագահի թիվ 287 հրամանագրի, ՀՀ կառավարության կառուցվածքում ստեղծվեց ՀՀ պետական եկամուտների նախարարությունը: ՀՀ կառավարության 2001 թ. հուլիսի 6-ի թիվ 603 որոշմամբ ՀՀ պետական եկամուտների նախարարության կազմից առանձնացվեց մաքսային վարչությունը և ստեղծվեց ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտե (ՀՀ նախագահի հրամանագրով ՀՀ պետական եկամուտների նախարարությունը վերակազմակերպվեց ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության): ՀՀ նախագահի 2008 թ. օգոստոսի 20-ի հրամանագրով վերոնշյալ 2 կառույցները միաձուլվեցին՝ վերակազմակերպվելով որպես ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, որը գործել է մինչև 2014 թ.: Նույն թվականի մայիսի 8-ի N 500-Ն որոշմամբ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ն ընդգրկվեց ֆինանսների նախարարության կազմում: 2016 թ., ըստ ՀՀ նախագահի մարտի 1-ի թիվ 213-Ն հրամանագրի, ՀՀ ֆինանսների նախարարությունը վերակազմակերպվեց՝ դրանից առանձնացնելով ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը: 2018 թ. ապրիլի 5-ից դա գործում է որպես ՊԵԿ («Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» 2018 թ. մարտի 23-ի ՀՕ-260-Ն օրենքի համաձայն)²¹:

ՀՀ ՊԵԿ-ի ստեղծումը, վերակազմակերպումն ու դրա գործունեության դադարեցումն իրականացվում են օրենքով: ՀՀ ՊԵԿ-ը գործում է ըստ ՀՀ սահմանադրության, օրենքների, իրավական այլ ակտերի և ըստ իր կանոնադրության (ՀՀ վարչապետի 2018 թ. հունիսի 11-ի թիվ 702 որոշմամբ հաստատվել է ՀՀ ՊԵԿ կանոնադրությունը): Կոմիտեի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներն են.

1. Ռիսկերի կառավարման և հարկային կարգապահության ծրագրերի վարչություն,
2. Վարչարարության մեթոդաբանության ընթացակարգերի և սպասարկման վարչություն,
3. Կազմակերպման և հսկողության վարչություն,

²¹ www.petekamutner.am

4. Հարկ վճարողների սպասարկման վարչություն,
5. Ստուգումների կազմակերպման և դիտարկման վարչություն,
6. Հարկ վճարողների ընթացիկ հսկողության հարկային տեսչություն–վարչություն և այլն:

Աջակցող ստորաբաժանում է՝ բաժինը:

ՀՀ ՊԵԿ-ի կառուցվածքը հետևյալն է՝ ՀՀ ՊԵԿ-ի նախագահ, 1 տեղակալ, 4 տեղակալներ, ՀՀ ՊԵԿ-ի գլխավոր քարտուղար:

ՊԵԿ-ի առաքելությունն է.

- հարկային և մաքսային միասնական պետական քաղաքականության իրականացում,
- ՀՀ պետական բյուջեի եկամուտների ապահովում,
- ՀՀ տնտեսական անվտանգությանը նպաստում,
- արդյունավետ հարկային և մաքսային հսկողության իրականացում և այլն:

ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հարկային վարչարարությունը լիազոր մարմնի (վարչարարություն կամ հսկողություն իրականացնող պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմին)՝ օրենսգրքի և այլ իրավական ակտերի հիման վրա իրականացվող գործողությունների ամբողջությունն է՝ ուղղված հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի համատարած և ճիշտ կիրառության ապահովմանը²² (հարկային մարմնի խնդիրների իրագործմանը): Այլ կերպ ասած, դա հարկային օրենսդրության դրույթների ամբողջական կենսագործումն է գործնականում: Հարկային մարմինը հսկողություն իրականացնելու լիազորություն ունեցող միասնական պետական կառավարման հանրապետական մարմին է:

Հարկային վարչարարությունը ներառում է.

1. հարկ վճարողների հաշվառում հարկային մարմնում,
2. հարկ վճարողների սպասարկման համակարգ,

²² ՀՀ հարկային օրենսգիրք, ընդ. 04.10.2016 թ., հոդ. 4:

3. հարկային պարտավորությունների ինքնազնահատում, հաշվարկների մշակում և ներկայացում,
4. հարկերի հավաքագրում,
5. ստուգումներ և ուսումնասիրություններ,
6. բողոքարկման համակարգ,
7. պատասխանատվության ենթարկում հարկային օրենսգրքի պահանջները խախտելու կամ չկատարելու համար:

Հարկային մարմնում գործում է հարկ վճարողների հաշվառման միասնական համակարգ: Ըստ այդմ՝ հաշվառվող հարկ վճարողներին տրամադրվում է ՀՎՀՀ նույնականացման կոդ, որը չկրկնվող ութանիշ թիվ է և ենթակա չէ փոփոխման: Հարկային մարմինն իրականացնում է հարկ վճարողների սպասարկում՝ մատուցելով համապատասխան ծառայություններ իրազեկման, հարկային հաշվարկների և այլ փաստաթղթերի ընդունման և/կամ տրամադրման ու այլ ձևերով:

Հարկային մարմինն իրականացնում է սպասարկման հեղուկալ գործառույթները.

1. հանրային իրազեկում,
2. պաշտոնական պարզաբանումների տրամադրում,
3. հարկ վճարողների ցանկերի հրապարակում,
4. հարկային հաշվարկների ընդունում և այլ ծառայություններ:

Հարկատուները, հիմնվելով հարկային օրենսգրքի ուսումնասիրության վրա, ստանալով որոշակի պարզաբանումներ՝ ինքնուրույնաբար (որոշ բացառությամբ՝ հարկային գործակալի մասնակցությամբ) հաշվարկում են հարկի գումարը:

Հարկահավաքման գործընթացն անցնում է հեղուկալ փուլերով.

1. անձնական քարտ վարելու միջոցով հարկային հաշվարկներ՝ ըստ ներկայացրածի և չներկայացրածի, ներկայացրածի և վճարում չկատարածի ցանկերի դուրսբերման,
2. նախնական բանավոր աշխատանք հարկատուի հետ,

3. տույժերի հաշվարկում,
4. մեղավոր պաշտոնատար անձանց նկատմամբ վարչական տուգանքի կիրառում,
5. գույքի բռնագանձման հայցի ներկայացում դատարան:

Հարկ վճարողի ստուգումը հարկային մարմնի լիազորությունների շրջանակներում իրականացվող ընթացակարգ է, որի նպատակն է հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի պահանջներին դրանց կատարման համապատասխանությունը պարզելը, այդ պահանջների խախտումները կանխելն ու խափանելը, դրանց հայտնաբերելը և հարկային պարտավորությունների ճշգրտելը, այդ թվում՝ ինքնուրույն հաշվարկելն ու վերահաշվարկելը, հայտնաբերված խախտումների համար պատասխանատվություն կիրառելը²³:

Ստուգումները լինում են համալիր և թեմատիկ, իրականացվում են հարկային մարմնի ղեկավարի տրված գրավոր հանձնարարագրի հիման վրա (2 օրինակից), որը հարկ վճարողին ներկայացվում է ստուգում սկսելուց առնվազն 3 աշխատանքային օր առաջ՝ ծանոթացման և ենթակա է ստորագրման ու վերադարձման:

Նույն հարկ վճարողի համալիր հարկային ստուգումները, կախված ռիսկայնության աստիճանից, իրականացվում են հետևյալ հաճախականությամբ.

1. բարձր ռիսկային. տարեկան 1 անգամ,
2. միջին ռիսկային. 3 տարին 1 անգամ,
3. ցածր ռիսկային. 5 տարին 1 անգամ:

Ըստ ստուգման արդյունքների՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում ստուգում իրականացնող պաշտոնատար անձը կազմում է ստուգման ակտի նախագիծ՝ 2 օրինակից, որը ստորագրվում և 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվում է հարկ վճարողին: Վերջինս, իր հերթին, 10 աշխատանքային օրվա ընթացքում կարող է ներկայացնել առարկություններ կամ գրավոր տեղեկացնել ստուգման ակտի բացակայության մասին: Ստուգման ժամկետը կարող է սահմանվել ոչ ավելի, քան 15 անընդմեջ աշխատանքային օր:

²³ ՀՀ հարկային օրենսգիրք, ընդ. 04.10.2016 թ., հոդ. 335:

Ուսումնասիրությունը հարկային մարմնի լիազորությունների շրջանակներում իրականացվող ընթացակարգ է, որի նպատակն է իրավական ակտերի պահանջներին դրանց կատարման համապատասխանությունը պարզելը, խախտումները կանխելն ու խափանելը, դրանց հայտնաբերելը, հարկային պարտավորությունների առաջադրումն ու հայտնաբերված խախտումների համար պատասխանատվություն կիրառելը²⁴:

Ուսումնասիրությունն իրականացվում է 2 եղանակով.

- կամերալ (հարկային մարմնում),
- արտագնա (հարկ վճարողի մոտ՝ հսկիչ գնում, չափագրում, հանդիպակաց ուսումնասիրություն):

Հարկային մարմնի ընդունած անհարական իրավական ակտը, նաև հարկային ծառայողի գործողությունները կամ անգործությունները կարող են բողոքարկվել հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողով (նախագահ և 8 անդամ) կամ դատարան: Ակտը բողոքարկվում է այն ուժի մեջ մտնելուց 2 ամսվա ընթացքում, իսկ հարկային ծառայողի գործողությունը կամ անգործությունը՝ 1 ամսվա ընթացքում:

Դիմում-բողոքները հարկային մարմինը քննության է առնում և որոշումներ ընդունում 30 օրվա ընթացքում (վարույթը կարճել, բավարարել, մերժել): Որոշումներն իրավազոր են, եթե դրանց կայացմանը մասնակցել է 7 հոգի (բաց քվեարկությամբ): Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից: Որոշումները կարող են բողոքարկվել տեսչական մարմինների բողոքարկման հանձնաժողով կամ դատարան:

Հարկային իրավախախտումների համար սահմանված է պարասխանավության 3 ձև.

- նյութական (տույժ, տուգանք),
- վարչական (որոշակի պաշտոնատար անձի նկատմամբ՝ կրելով կանխարգելիչ բնույթ),

²⁴ Նույն տեղում, հոդ. 343:

- քրեական (լուրջ հարկային իրավախախտումների (խոշոր գումարների հափշտակում) նկատմամբ կիրառվում են քրեական պատիժներ):

Արդյունավետ հարկային վարչարարությունը հարկային համակարգի հաջողության հիմքն է:

3. ՀԱՐԿԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՀԱՐԿԻ ԵՎ ՎՃԱՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հարկի²⁵ տեսակները

ՀՀ-ում կիրառվում են.

1. **պեղական հարկեր**, որոնց տեսակներն են²⁶

- ա) ավելացված արժեքի հարկ (ԱԱՀ),
- բ) ակցիզային հարկ,
- գ) շահութահարկ,
- դ) եկամտային հարկ,
- ե) բնապահպանական հարկ,
- զ) ճանապարհային հարկ,
- է) շրջանառության հարկ.

2. **տեղական հարկեր**, որոնց տեսակներն են՝

- ա) անշարժ գույքի հարկ,
- բ) փոխադրամիջոցների գույքահարկ:

Վճարի²⁷ տեսակները

ՀՀ-ում կիրառվում են.

1. **պեղական վճարներ**, որոնց տեսակներն են՝

²⁵ Հարկ՝ պետական և (կամ) հասարակական կարիքների բավարարման նպատակով ՀՀ պետական և (կամ) համայնքների բյուջեներ վճարվող պարտադիր և անհատույց գումար, որը վճարվում է հարկ վճարողների կողմից՝ Օրենսգրքով սահմանված կարգով, չափերով և ժամկետներում:

²⁶ ՀՀ հարկային օրենսգիրք, ընդ. 04.10.2016 թ., հոդ. 6:

²⁷ Վճար՝ Օրենսգրքով նախատեսված պետական կամ տեղական վճար:

- ա) պետական տուրք,
- բ) բնօգտագործման վճար,
- գ) սոցիալական վճար,
- դ) ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման և օգտագործման պարտադիր վճար,
- ե) հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճար,
- զ) կենսաթոշակային վճար.

2. **տեղական վճարներ**, որոնց տեսակներն են²⁸

- ա) տեղական տուրք,
- բ) տեղական վճար:

ՀԱՐԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ

ՀՀ-ում գործում են հարկման ընդհանուր և հատուկ համակարգեր²⁹:

Հարկման ընդհանուր համակարգի շրջանակներում կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները հարկվում են մասնավորապես՝ ԱԱՀ-ով և (կամ) շահութահարկով:

Հարկման հատուկ համակարգերից՝

1. շրջանառության հարկի համակարգի շրջանակներում կազմակերպությունները հարկվում են ԱԱՀ-ին և (կամ) շահութահարկին փոխարինող շրջանառության հարկով, իսկ անհատ ձեռնարկատերերը և նոտարները՝ շահութահարկով և ԱԱՀ-ին փոխարինող շրջանառության հարկով.
2. միկրոձեռնարկատիրության համակարգի շրջանակներում կազմակերպությունները և ֆիզիկական անձինք ազատվում են (սահմանված դեպքերում) մասնավորապես՝ ԱԱՀ-ով և (կամ) շահութահարկով, ինչպես նաև շրջանառության հարկով հարկումից:

²⁸ ՀՀ հարկային օրենսգիրք, ընդ. 04.10.2016 թ., հոդ. 7:

²⁹ Նույն տեղում, հոդ. 8:

ՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

1. Հաշվառման հաշվեգրման մեթոդ. հարկ վճարողը եկամուտների և ծախսերի հաշվառումն իրականացնում է՝ ելնելով իր կողմից այդ եկամուտների ստացման իրավունքը ձեռք բերելու կամ իր համար այդ ծախսերը ճանաչելու պահից՝ անկախ հատուցումների ստացման կամ վճարումների կատարման պահից:
2. Հաշվառման դրամարկղային մեթոդ. հարկ վճարողը եկամուտների և ծախսերի հաշվառումն իրականացնում է՝ ելնելով հատուցումների ստացման կամ վճարումների կատարման պահից՝ անկախ իր կողմից այդ եկամուտների ստացման իրավունքը ձեռք բերելու կամ իր համար այդ ծախսերը ճանաչելու պահից³⁰:

ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՄԱՆ ԲԱՑԱՌՈՒՄԸ

ՀՀ ռեզիդենտ կազմակերպությունների և ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձանց կողմից ՀՀ-ից դուրս ստացված կամ ստացման ենթակա՝ շահութահարկի և եկամտային հարկի հարկման օբյեկտները ներառվում են այդ կազմակերպությունների և ֆիզիկական անձանց՝ համապատասխան հարկատեսակով հարկման օբյեկտի մեջ և ենթակա են հարկման ՀՀ-ում Օրենսգրքով սահմանված կարգով³¹:

Վերոնշյալ հարկերի գումարները նվազեցվում են ըստ այն գումարների, որ այդ կազմակերպություններից և ֆիզիկական անձանցից գանձվել են օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան, Օրենսգրքով սահմանված կարգով և դրույքաչափով հաշվարկվող համապատասխան հարկերի գումարները չգերազանցող չափերով:

Եթե նվազեցման ենթակա շահութահարկի կամ եկամտային հարկի գումարը գերազանցում է տվյալ հաշվետու տարվա արդյունքներով առաջացած պարտավորությունը, ապա հարկերի գերազանցող գումարները ենթակա են նվազեցման

³⁰ ՀՀ հարկային օրենսգիրք, ընդ. 04.10.2016 թ., հոդ. 15:

³¹ Նույն տեղում, հոդ. 20:

կազմակերպության կամ ֆիզիկական անձի՝ հաջորդ հաշվետու տարիների համապատասխան հարկատեսակի պարտավորություններից:

ՀԱՐԿԱՅԻՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՏԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հարկային իրավախախտումը հարկ վճարողի կամ հարկային գործակալի հակաիրավական այնպիսի գործողությունը կամ անգործությունն է, որի համար Օրենսգրքով և (կամ) վճարների վերաբերյալ ՀՀ օրենքներով սահմանվում է հարկային պատասխանատվություն³²:

Հարկային պատասխանատվությունն իրավական պատասխանատվության ինքնուրույն տեսակ է, որն ուղղված է պետության ֆինանսական կայունության և ֆինանսական շահերի ապահովմանը՝ հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի դրույթները խախտելու հետևանքով պետությանը պատճառված նյութական վնասի լրիվ ծավալով հատուցման և հետագա հարկային իրավախախտումները կանխարգելելու միջոցով:

Հարկային իրավախախտման համար կարող են կիրառվել հարկային պատասխանատվության հետևյալ տեսակները.

1. **նախազգուշացում.** լրացուցիչ հարկային պարտավորություններ չեն առաջանում,
2. **տույժ.** հաշվարկվում են լրացուցիչ հարկային պարտավորություններ,
3. **տուգանք.** հաշվարկվում են լրացուցիչ հարկային պարտավորություններ,
4. **գույքի բռնագրավում.** գույքը, որոշման հիման վրա, հարկադիր կարգով անհատույց վերցվում է որպես պետական սեփականություն,
5. **հարկ վճարողի գործունեության կասեցում.** լրացուցիչ հարկային պարտավորություն չի առաջանում:

Հարկային իրավախախտումներ են համարվում.

ա) Հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելը. տույժ՝ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար 0,075%-ի չափով (21.04.2020 թ.՝ 0,04%-ի չա-

³² ՀՀ հարկային օրենսգիրք, ընդ. 04.10.2016 թ., հոդ. 397:

փով)՝ ոչ ավելի, քան 730 օրվա համար:

բ) Հարկային հաշվարկը սահմանված ժամկետից ուշ ներկայացնելը կամ չներկայացնելը. տուգանք՝ ժամկետին հաջորդող յուրաքանչյուր 15 լրացած օրվա համար (անկախ 15-րդ օրը ոչ աշխատանքային լինելու հանգամանքից)՝ հաշվարկված հարկի ընդհանուր գումարի 5%-ի չափով, ոչ ավելի հաշվարկված հարկի ընդհանուր գումարից:

գ) Հարկի գումարը պակաս ցույց տալը. պակաս ցույց տրված հարկի գումարը, նաև տուգանք՝ այդ գումարի 50%-ի չափով (շրջանառության հարկի դեպքում 100%): Կրկնակի խախտման դեպքում (հաջորդող մեկ տարվա ընթացքում)՝ հարկի գումար (պակաս ցույց տրված), նաև տուգանք՝ այդ գումարի 100%-ի չափով:

Տույժը հարկը և վճարները սահմանված ժամկետներում չվճարելու կամ այդ ժամկետներից ուշ վճարելու համար պատասխանատվության միջոց է:

Տուգանքը սահմանված պահանջները չկատարելու կամ խախտումով կատարելու համար պատասխանատվության միջոց է:

ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ (ՀԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԻ) ԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Հարկ վճարողը (հարկային գործակալը) և դրա պաշտոնատար անձը պարտավոր են.³³

1. սահմանված կարգով և ժամկետներում ինքնուրույն հաշվարկել և կատարել իրենց հարկային պարտավորությունները՝ սահմանված դեպքերում կատարելով նաև հարկի և (կամ) վճարի կանխավճարներ,
2. վարել սահմանված հաշվառում, օրենսդրությամբ սահմանված դեպքում՝ նաև հաշվապահական հաշվառում,
3. սահմանված կարգով և ժամկետներում հարկային մարմին ներկայացնել հարկային հաշվարկներ,

³³ ՀՀ հարկային օրենսգիրք, ընդ. 04.10.2016 թ., հոդ. 33:

4. ներկայացնել հարկային արտոնությունների իրավունքը հաստատող փաստաթղթեր,
5. չխոչընդոտել հարկային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձանց պարտականությունների կատարմանը և այլն:

Հարկ վճարողը և դրա պաշտոնատար անձն իրավունք ունեն.³⁴

1. սահմանված կարգով դիմելու հարկային մարմին՝ պարզաբանում ստանալու համար (իրավական ակտերի դրույթների կիրառման վերաբերյալ),
2. ինքնուրույն կամ իրենց լիազորած ներկայացուցչի միջոցով հարկային մարմնում ներկայացնելու իրենց շահերը,
3. օգտվելու սահմանված հարկային արտոնություններից,
4. սահմանված կարգով դիմելու հարկային մարմին՝ միասնական հաշվին առկա գումարը վերադարձնելու համար,
5. ծանոթանալու հարկային հսկողության արդյունքում կազմվող ակտերին, արձանագրություններին և դրանց նախագծերին և այլն:

ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆԻ (ՀԱՐԿԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՂ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ) ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հարկային մարմինը պարտավոր է.³⁵

1. պահպանել ՀՀ օրենսդրությունը, հարկ վճարողների իրավունքներն ու օրինական շահերը,
2. իրականացնել հարկ վճարողների հաշվառում,
3. հարկ վճարողների կողմից հարկային մարմինն ներկայացվող հարցադրումներին տալ համապատասխան պարզաբանումներ,
4. սահմանված դեպքերում, կարգով և ժամկետներում հարկ վճարողներին վերադարձնել միասնական հաշվին առկա գումարները,
5. պահպանել հարկային գաղտնիքը և այլն:

³⁴ ՀՀ հարկային օրենսգիրք, ընդ. 04.10.2016 թ., հոդ. 34:

³⁵ Նույն տեղում, հոդ. 35:

Հարկային մարմինը լիազորված է.³⁶

1. սահմանված կարգով իրականացնել հարկ վճարողների հարկային հսկողություն,
2. սահմանված դեպքերում և կարգով ինքնուրույն հաշվարկել, վերահաշվարկել, ճշգրտել հարկ վճարողների հարկային պարտավորությունները,
3. սահմանված կարգով կատարել չափագրումներ, գույքագրումներ, հսկիչ գնումներ,
4. սահմանված կարգով պահել ու հարկային ծառայողների միջոցով կրել, օգտագործել զենք և զինամթերք,
5. սահմանված կարգով իրականացնել օպերատիվ-հետախուզական միջոցառումներ և այլն:

4. ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿ

Ավելացված արժեքի հարկը հարկման օբյեկտ համարվող գործարքների և (կամ) գործառնությունների իրականացման համար սահմանված կարգով, չափով և ժամկետներում պետական բյուջե վճարվող պետական հարկ է³⁷:

Վճարողներ են համարվում հարկային մարմնում որպես ԱԱՀ վճարող հաշվառված կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները:

ԱՁ և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձինք չեն համարվում ԱԱՀ վճարողներ: Միաժամանակ, եթե վերջիններս ՀՀ տարածք են ներմուծում ապրանքներ, որոնց ներմուծումը, ըստ «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի, համարվում է ձեռնարկատիրական գործունեության նպատակով իրականացվող ներմուծում, կամ եթե մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք իրականացնում են ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող գոր-

³⁶ ՀՀ հարկային օրենսգիրք, ընդ. 04.10.2016 թ., հոդ. 36:

³⁷ ՀՀ հարկային օրենսգիրք, ընդ. 04.10.2016 թ., հոդ. 58:

ծարքներ և (կամ) գործառնություններ, ապա պարտավոր են հաշվարկել և պետական բյուջե վճարել դրանցից առաջացող ԱԱՀ գումարները:

Հարկման օբյեկտ են համարվում հետևյալ գործարքներն ու գործառնությունները.

1. ապրանքի մատակարարումը, եթե ապրանքի մատակարարման վայրը համարվում է ՀՀ-ն,
2. աշխատանքի կատարումը և (կամ) ծառայության մատուցումը,
3. «Բացթողնում ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ապրանքի ներմուծումը ՀՀ,
4. ԵԱՏՄ անդամ պետություններից ԵԱՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքի ներմուծումը ՀՀ:

Հարկման բազա է համարվում.

1. ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման գործարքների դեպքում՝ դրանց արժեքը՝ դրամական արտահայտությամբ, առանց ԱԱՀ-ի,

2. «Բացթողնում ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ՀՀ ապրանքի ներմուծման դեպքում՝ ԵԱՏՄ միասնական մաքսային օրենսդրությամբ որոշվող մաքսային արժեքի, մաքսատուրքի, իսկ ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքի ներմուծման դեպքում՝ նաև հաշվարկված ակցիզային հարկի հանրագումարը.

3. ԵԱՏՄ անդամ պետություններից ՀՀ ԵԱՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքի ներմուծման դեպքում՝ ներմուծվող ապրանքի ձեռքբերման արժեքը, իսկ ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքի ներմուծման դեպքում՝ ներմուծվող ապրանքի ձեռքբերման արժեքի և հաշվարկված ակցիզային հարկի հանրագումարը,

4. ՀՀ տարածքից «Արտահանում» մաքսային ընթացակարգով արտահանված, ինչպես նաև ՀՀ տարածքից ԵԱՏՄ անդամ պետություն արտահանված՝ ԵԱՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքի մատակարարման գործարքի

դեպքում՝ «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքով հաշվարկվող մաքսային արժեքը:

Դրույքաչափեր

Հարկման օբյեկտ համարվող գործարքների ու գործառնությունների հարկման բազայի նկատմամբ ԱԱՀ-ն հաշվարկվում է 20% դրույքաչափով:

Ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման դիմաց ԱԱՀ գումարը ներառող հատուցման գումարում ԱԱՀ գումարը որոշվում է 16.67% դրույքաչափի հաշվարկային մեծությամբ:

Որոշ գործարքների հարկման բազայի նկատմամբ ԱԱՀ-ն հաշվարկվում է 0% դրույքաչափով:

ԱԱՀ-ից ազատելն ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող գործարքների ու գործառնությունների հարկման բազայի նկատմամբ ԱԱՀ չհաշվարկելն է:

ԱԱՀ-ից ազատվում են հետևյալ գործարքներն ու գործառնությունները.

1. հանրակրթական, երաժշտական, նկարչական, ուսումնական հաստատությունների, մարզադպրոցների, միջնակարգ մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից ուսուցման ծառայությունների մատուցումը,
2. դպրոցական գրերի և նոտայի տետրերի, մանկական և դպրոցական գրականության, բարձրագույն ուսումնական հաստատությունների, ազգային ակադեմիայի հրապարակած գիտական և ուսումնական հրատարակությունների օտարումը,
3. թաղման բյուրոների, գերեզմանատների, ծիսական բնույթի այլ աշխատանքների կատարումը, ծառայությունների մատուցումը և համապատասխան պարագաների օտարումը,
4. կրոնական ծիսակատարությունների ծառայությունների մատուցումը,
5. թերթերի և ամսագրերի օտարումը և այլն:

0-ական դրույքաչափով հարկումը հարկման բազայի նկատմամբ ԱԱՀ 0% դրույքաչափով հաշվարկվում է հետևյալ գործարքների դեպքում.

1. ՀՀ տարածքից «Արտահանում» մաքսային ընթացակարգով արտահանված ապրանքի (բացառությամբ սև և գունավոր մետաղների ջարդոնի) մատակարարում,
2. ՀՀ տարածքից ԵԱՏՄ անդամ պետություն արտահանված՝ ԵԱՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքի մատակարարում,
3. բեռների, փոստի և (կամ) ուղևորների փոխադրման՝ միջազգային տրանսպորտային ծառայությունների մատուցում,
4. «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ՀՀ ներմուծված ապրանքները ՀՀ ներմուծման մաքսային մարմնից մինչև ՀՀ-ից արտահանման մաքսային մարմին տեղափոխելու հետ կապված աշխատանքների կատարում և (կամ) ծառայությունների մատուցում և այլն:

ԱԱՀ վճարողները պարտավոր են դուրս գրել հարկային հաշիվներ: Հարկային հաշիվներ դուրս չեն գրում.

1. ԱԱՀ վճարող չհամարվողները,
2. այն գործարքների մասով, որոնք ազատված են ԱԱՀ-ից,
3. այն գործարքների մասով, որոնք ենթակա են ԱԱՀ 0% դրույքաչափով հարկման:

ԱԱՀ վճարողները էլեկտրոնային ստորագրությամբ վավերացնում են հաշվետու ժամանակաշրջանում ձեռք բերված ապրանքների, ընդունված աշխատանքների և ստացված ծառայությունների գծով մատակարարների կողմից դուրս գրված հարկային հաշիվները:

Հաշվետու ժամանակաշրջան

ԱԱՀ հաշվարկման և վճարման համար հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր հաշվետու ամիս: Վճարողները պետական բյուջե են վճարում այդ ժամանակաշրջանում իրականացված՝ հարկման բազայի նկատմամբ հաշվարկված ԱԱՀ գումարների և հաշվանցվող ԱԱՀ գումարների դրական տարբերությունը: Հաշվանցվող գումարներ են համարվում.

1. մատակարարների դուրս գրած հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ գումարները,

2. «Բացթողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ՀՀ տարածք ներմուծված ապրանքների համար հաշվարկված և վճարված ԱԱՀ գումարները,
3. ԵԱՏՄ անդամ պետություններից ՀՀ տարածք ներմուծված՝ ԵԱՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների համար հաշվարկված և վճարված ԱԱՀ գումարները:

Հաշվարկի ներկայացում

ԱԱՀ վճարողները մինչև յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ հարկային մարմին են ներկայացնում ԱԱՀ և ակցիզային հարկի միասնական հաշվարկներ:

Վճարում

ԱԱՀ վճարողները հաշվարկված պետական բյուջե վճարման ենթակա ԱԱՀ գումարները պետական բյուջե են վճարում մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ՝ որպես հարկային մարմին վճարվող գումարներ:

«Բացթողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ՀՀ ներմուծվող ապրանքների համար հաշվարկված ԱԱՀ գումարները ՀՀ պետական բյուջե են վճարվում մինչև «Բացթողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ապրանքների բաց թողնումը՝ որպես մաքսային մարմին վճարվող գումարներ:

ԵԱՏՄ անդամ պետություններից ՀՀ ներմուծվող՝ ԵԱՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների համար հաշվարկված ԱԱՀ գումարները ՀՀ պետական բյուջե են վճարվում մինչև ապրանքները ՀՀ տարածք ներմուծելու օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ՝ որպես հարկային մարմին վճարվող գումարներ:

5. ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿ

Ակցիզային հարկը հարկման օբյեկտ համարվող գործարքների և (կամ) գործառնությունների իրականացման համար սահմանված կարգով, չափով և ժամկետներում պետական բյուջե վճարվող պետական հարկ է³⁸:

Վճարողներ են համարվում հարկման օբյեկտ համարվող գործարքներ և (կամ) գործառնություններ իրականացնող կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը:

Ռեզիդենտ կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կամ ոչ ռեզիդենտի մշտական հաստատության հետ կնքված պայմանագրերով նրանց կողմից տրված հումքից ՀՀ տարածքում արտադրված կամ տարայավորված՝ ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքի մատակարարման գործարքի մասով վճարող է համարվում համապատասխանաբար ՀՀ ռեզիդենտ կազմակերպությունը կամ ՀՀ-ում հաշվառված ԱԶ-ն կամ ոչ ռեզիդենտի մշտական հաստատությունը՝ որպես պատվիրատու:

Մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպության կամ ֆիզիկական անձի հետ կնքված պայմանագրերով նրանց կողմից տրված հումքից ՀՀ տարածքում արտադրված կամ տարայավորված՝ ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքի մասով ակցիզային հարկ վճարող է համարվում այդ ապրանքն արտադրող կամ տարայավորող կազմակերպությունը կամ ԱԶ-ն:

ԱԶ չհանդիսացող ֆիզիկական անձինք չեն համարվում վճարողներ, սակայն եթե նրանք ՀՀ տարածք են ներմուծում ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքներ, որոնց ներմուծումը, «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի համաձայն, համարվում է ձեռնարկատիրական գործունեության նպատակով իրականացվող ներմուծում, ապա պարտավոր են հաշվարկել և պետական բյուջե վճարել այդ ներմուծումներից առաջացող հարկի գումարները:

³⁸ ՀՀ հարկային օրենսգիրք, ընդ. 04.10.2016 թ., հոդ. 82:

Հարկման օբյեկտ էն համարվում.

1. արտադրողի արտադրած կամ տարայավորած՝ ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների մատակարարումը,
2. «Բացթողնում ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքի ներմուծումը ՀՀ,
3. ԵԱՏՄ անդամ պետություններից ակցիզային հարկով հարկման ենթակա ԵԱՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքի ներմուծումը ՀՀ,
4. ավտոգազալիցքավորման ճնշակայանում սեղմված բնական գազի մատակարարումը:

Հարկման բազա է համարվում ապրանքի քանակը (ծավալը)՝ արտահայտված չափման բնաիրային միավորներով:

Ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքներն են. էթիլային սպիրտը (բացառությամբ կոնյակի սպիրտի), սպիրտային խմիչքները, գարեջուրը, գինին, ծխախոտի արտադրանքը, քսայուղը, բենզինը, դիզելային վառելիքը, հում նավթը, նավթամթերքները, նավթային գազերը, գազանման այլ ածխաջրածինները, սեղմված բնական գազը:

Դրույքաչափեր

Հարկման օբյեկտ համարվող գործարքների ու գործառնությունների հարկման բազայի նկատմամբ ակցիզային հարկը հաշվարկվում է սահմանված դրույքաչափերի և ակցիզային հարկի հաշվարկման գործակցի արտադրյալով: ԱՏԳ ԱԱ 2207, 2208, 2402, 2403999009 ապրանքային դիրքերին դասվող ապրանքների մասով իրականացվող գործարքների և գործառնությունների հարկման բազայի նկատմամբ ակցիզային հարկը հաշվարկվում է ըստ սահմանված դրույքաչափերի:

Օրինակ՝

Ապրանքի ծածկագիրն ըստ ԱՏԳ ԱԱ-ի	Ապրանքախմբի անվանումը	Հարկման բազայի չափման միավորը	Ակցիզային հարկի դրույքաչափերը (դրամ)
2203	գարեջուր	1 լիտր	130 դրամ
271012	բենզին	1 տոննա	40000 դրամ

Ակցիզային հարկի հաշվարկման գործակիցներն են.

	2020 թվականի հունվարի 1-ից	2021 թվականի հունվարի 1-ից	2022 թվականի հունվարի 1-ից	2023 թվականի հունվարի 1-ից
Ակցիզային հարկի հաշվարկման գործակից	1.0	1.03	1.06	1.09

ԱՏԳ ԱԱ 2208 ծածկագրին դասվող՝ 40%-ից բարձր սպիրտայնությամբ ապրանքների համար սպիրտայնության 40%-ը գերազանցող յուրաքանչյուր ամբողջական տոկոսային կետի համար հարկի դրույքաչափն ավելացվում է 7.5 դրամով, իսկ մինչև 9% սպիրտայնությամբ ապրանքների համար հարկը յուրաքանչյուր լիտրի համար սահմանվում է 100 դրամ:

Արտոնություններ

Ակցիզային հարկից ազատելը հարկման բազայի նկատմամբ հարկ չհաշվարկելն է:

Ազատվում են հետևյալ գործարքները.

1. ՀՀ տարածքից «Արտահանում» մաքսային ընթացակարգով արտահանված՝ ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքի մատակարարումը,
2. ՀՀ տարածքից ԵԱՏՄ անդամ պետություն արտահանված՝ ակցիզային հարկով հարկման ենթակա՝ ԵԱՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքի մատակարարումը,
3. բռնագրավման կամ նվիրատվության ձևով ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումը պետությանը կամ համայնքին և այլն:

Հաշվետու ժամանակաշրջան

Ակցիզային հարկի հաշվարկման և վճարման հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր հաշվետու ամիս: Վճարողները պետական բյուջե են վճարում հարկման բազայի նկատմամբ հաշվարկված հարկի գումարի և հաշվանցվող գումարների դրական տարբերությունը:

Հաշվարկ

Ակցիզային հարկ վճարողները մինչև յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ հարկային մարմին են ներկայացնում ԱԱՀ և ակցիզային հարկի միասնական հաշվարկներ (2-րդ և 3-րդ հարկման օբյեկտների մասով միասնական հաշվարկներ չեն ներկայացնում):

Վճարում

Ակցիզային հարկ վճարողները հաշվարկված պետական բյուջե վճարման ենթակա ակցիզային հարկի գումարները պետական բյուջե են վճարում մինչև յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ՝ որպես հարկային մարմին վճարվող գումարներ (2-րդի համար՝ մինչև բացթողնումը, 3-րդի համար՝ մինչև ՀՀ տարածք ներմուծելու օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ):

6. ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿ

Շահութահարկը հարկման օբյեկտի համար սահմանված կարգով, չափով և ժամկետներում պետական բյուջե վճարվող պետական հարկ է³⁹:

Վճարողներ են համարվում.

1. ռեզիդենտ կազմակերպությունները,
2. Հայաստանի Հանրապետությունում հաշվառված.
 - ա) անհատ ձեռնարկատերերը,
 - բ) նոտարները.
3. Հայաստանի Հանրապետությունում հաշվառված, կանոնները գրանցած պայմանագրային ներդրումային ֆոնդերը (բացառությամբ կենսաթոշակային և երաշխիքային ֆոնդերի).

³⁹ ՀՀ հարկային օրենսգիրք, ընդ. 04.10.2016 թ., հոդ. 102:

4. ոչ ռեզիդենտ կազմակերպությունները, ինչպես նաև մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող և (կամ) մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետության աղբյուրներից եկամուտ ստացող ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք:

Վճարողներ չեն համարվում.

1. Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս պետական կառավարչական հիմնարկների.
2. Հայաստանի Հանրապետության համայնքները՝ ի դեմս համայնքային կառավարչական հիմնարկների.
3. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը.
4. Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունները և հյուպատոսական հիմնարկները, դրանց հավասարեցված միջազգային կազմակերպությունները:

Հարկման օբյեկտ է համարվում.

1. ռեզիդենտ կազմակերպությունների, Հայաստանի Հանրապետությունում հաշվառված անհատ ձեռնարկատերերի և նոտարների (այսուհետ՝ ռեզիդենտ շահութահարկ վճարողներ) համար՝ Հայաստանի Հանրապետության աղբյուրներից և (կամ) Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվող աղբյուրներից ստացվող կամ ստացման ենթակա (այսուհետ սույն բաժնում՝ ստացվող) համախառն եկամուտը, բացառությամբ Հայաստանի Հանրապետությունում հաշվառված անհատ ձեռնարկատերերի և նոտարների անձնական եկամուտների.

2. Հայաստանի Հանրապետությունում հաշվառված, կանոնները գրանցած ներդրումային ֆոնդերի համար՝ զուտ ակտիվների հանրագումարը.

3. ոչ ռեզիդենտ կազմակերպությունների, ինչպես նաև մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող և (կամ) մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետության աղբյուրներից եկամուտ ստացող ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց (այսուհետ՝ ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողներ) համար՝ Հայաստանի Հան-

րապետության աղբյուրներից ստացվող համախառն եկամուտը, բացառությամբ մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող և (կամ) մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետության աղբյուրներից եկամուտ ստացող ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց՝ Հայաստանի Հանրապետության աղբյուրներից ստացվող անձնական եկամուտների:

Հարկման բազա են համարվում.

1. ռեզիդենտ շահութահարկ վճարողների համար՝ հարկվող շահույթը, որը որոշվում է որպես համախառն եկամտի և սահմանված նվազեցումների դրական տարբերություն.

2. Հայաստանի Հանրապետությունում հաշվառված, կանոնները գրանցած ներդրումային ֆոնդերի համար՝ զուտ ակտիվների հանրագումարը, որը որոշվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած և հարկային մարմնի հետ համաձայնեցրած կարգով.

3. մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող և (կամ) մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետության աղբյուրներից եկամուտ ստացող ոչ ռեզիդենտ կազմակերպությունների և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց (այսուհետ սույն բաժնում՝ մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողներ) համար՝ հարկվող շահույթը, որը որոշվում է որպես սահմանված համախառն եկամտի և նվազեցումների դրական տարբերություն.

4. առանց մշտական հաստատության՝ Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող և (կամ) առանց մշտական հաստատության՝ Հայաստանի Հանրապետության աղբյուրներից եկամուտ ստացող ոչ ռեզիդենտ կազմակերպությունների (այսուհետ՝ առանց մշտական հաստատության Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողներ) համար՝ ՀՀ աղբյուրներից ստացվող համախառն եկամուտը.

5. մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ կազմակերպությունների՝ մշտական հաստատությանը չվերագրվող գործունեության և (կամ) եկամուտների մասով՝ սահմանված համախառն եկամուտը:

Հայաստանի Հանրապետության աղբյուրներից ստացվող եկամուտներ են համարվում.

1. ձեռնարկատիրական եկամուտները,
2. պասիվ եկամուտները:

Եկամուտ չեն համարվում.

1. մասնակիցների (բաժնետեր, փայատեր, անդամ) կողմից շահութահարկ վճարողի կանոնադրական կապիտալում (հիմնադրամում) կատարված ներդրումները,

2. շահութահարկ վճարողի բաժնետոմսերի, բաժնեմասերի կամ փայաբաժինների տեղաբաշխման գնի և անվանական արժեքի դրական տարբերությունը,

3. ակտիվների, այդ թվում՝ արտարժույթի, արտարժույթով արտահայտված այլ ակտիվների, ինչպես նաև բանկային ոսկով և այլ թանկարժեք մետաղներով արտահայտված ակտիվների վերագնահատման դրական արդյունքը,

4. պարտավորությունների, այդ թվում՝ արտարժույթով, ինչպես նաև բանկային ոսկով և այլ թանկարժեք մետաղներով արտահայտված պարտավորությունների վերագնահատման բացասական արդյունքը,

5. հարկային արտոնությունների և վճարների գծով տրվող արտոնությունների գումարները:

Ռեզիդենտ շահութահարկ վճարողների հարկման բազան որոշելիս համախառն եկամտից նվազեցվում են ձեռնարկատիրական ծախսերը (այսուհետ՝ ծախսեր), կորուստները և այլ նվազեցումները:

Նվազեցումների միևնույն գումարը համախառն եկամտից նվազեցվում է միայն մեկ անգամ:

Հարկման բազան որոշելիս սահմանված համախառն եկամտից նվազեցվում են շահութահարկ վճարողի կատարած, նաև հաշվարկային փաստաթղթերով հիմնավորված ծախսերը:

Ծախս չեն համարվում.

1. սեփական կապիտալի բաշխումը մասնակիցներին՝ շահաբաժինների կամ նման այլ ձևով,
2. այլ հարկ վճարողի սեփական կապիտալում կատարված ներդրումները,
3. շահութահարկ վճարողի հետ գնած բաժնետոմսերի, բաժնեմասերի կամ փայաբաժինների իրացման և հաշվեկշռային արժեքի բացասական տարբերությունը,
4. ակտիվների, այդ թվում՝ արտարժույթի, արտարժույթով, ինչպես նաև բանկային ոսկով և այլ թանկարժեք մետաղներով արտահայտված ակտիվների վերագնահատման բացասական արդյունքը,
5. պարտավորությունների, այդ թվում՝ արտարժույթով, ինչպես նաև բանկային ոսկով և այլ թանկարժեք մետաղներով արտահայտված պարտավորությունների վերագնահատման դրական արդյունքը:

Դրույքաչափեր

Ռեզիդենտ շահութահարկ վճարողի և մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի (մշտական հաստատությանը վերագրվող եկամուտների գծով ձևավորվող հարկման բազայի մասով) հարկման բազայի նկատմամբ շահութահարկը հաշվարկվում է 18 տոկոս դրույքաչափով, բացառությամբ սահմանված դեպքերի:

Հայաստանի Հանրապետությունում հաշվառված, կանոնները գրանցած ներդրումային ֆոնդերի հարկման բազայի նկատմամբ շահութահարկը հաշվարկվում է 0.01 տոկոս դրույքաչափով:

Հարկման հատուկ համակարգերում գործունեություն իրականացնող անհատ ձեռնարկատերերը և նոտարները գործունեության այդ տեսակների մասով վճարում են ամսական հինգ հազար դրամի չափով շահութահարկ (անկախ այն

հանգամանքից, թե անհատ ձեռնարկատերը կամ նոտարը հարկման քանի հատուկ համակարգում է գործունեություն իրականացնում), որը նրանց համար համարվում է շահութահարկի գծով վերջնական հարկային պարտավորություն:

Առանց մշտական հաստատության՝ Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի հարկման բազայի նկատմամբ շահութահարկը հաշվարկվում է հետևյալ դրույքաչափերով.

1. ապահովագրական հատուցումների, վերաապահովագրական վճարների և փոխադրման (ֆրախտի) դիմաց ստացված եկամուտների մասով՝ հինգ տոկոս,
2. պասիվ եկամուտների մասով՝ տասը տոկոս, բացառությամբ սահմանված դեպքերի,
3. շահաբաժինների մասով՝ հինգ տոկոս,
4. արժեթղթերի օտարումից ստացվող ակտիվների արժեքի հավելածի մասով՝ զրո տոկոս,
5. Հայաստանի Հանրապետության աղբյուրներից ստացվող այլ եկամուտների մասով՝ քսան տոկոս:

Շահութահարկի վճարումից ազատվում են.

- մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ընդգրկված հարկային տարիների համար գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղված շահութահարկ վճարողները՝ իրենց կողմից գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացվող եկամտի, ինչպես նաև այլ ակտիվների իրացումից ստացվող և այլ եկամուտների մասով, եթե այլ ակտիվների իրացումից ստացվող և այլ եկամուտների տեսակարար կշիռը համապատասխան հարկային տարվա համախառն եկամտում չի գերազանցում տասը տոկոսը: Այլ ակտիվների իրացումից ստացվող և այլ եկամուտների տեսակարար կշիռը համապատասխան հարկային տարվա համախառն եկամտում տասը տոկոսը գերազանցելու դեպքում արտոնությունը գործում է

միայն գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացվող եկամտի մասով,

- Համահայկական բանկը,
- ձեռագործ գորգերի արտադրությամբ զբաղվող շահութահարկ վճարողները՝ ձեռագործ գորգերի իրացումից ստացվող եկամտի մասով,
- ազատ տնտեսական գոտու շահագործող համարվող շահութահարկ վճարողները՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծված ազատ տնտեսական գոտում իրականացվող գործունեությունից ստացվող եկամտի մասով:

Շահութահարկի հաշվարկման և վճարման համար հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր հաշվետու տարին:

Ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողներին վճարված եկամուտների գծով ձևավորվող հարկման բազայի մասով շահութահարկը հաշվարկում և պահում է հարկային գործակալը:

Ռեզիդենտ շահութահարկ վճարողները, Հայաստանի Հանրապետությունում հաշվառված, կանոնները գրանցած պայմանագրային ներդրումային ֆոնդերը (բացառությամբ կենսաթոշակային և երաշխիքային ֆոնդերի), ինչպես նաև մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողները մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող հարկային տարվա ապրիլի 20-ը ներառյալ հարկային մարմին են ներկայացնում շահութահարկի հաշվարկ:

Հարկային գործակալները մինչև յուրաքանչյուր հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ հարկային մարմին են ներկայացնում նախորդ հաշվետու եռամսյակում ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողներին վճարված եկամուտների, այդ եկամուտներից հաշվարկված, պահված և պետական բյուջե վճարված շահութահարկի գումարների մասին հաշվարկ:

Հարկային գործակալի բացակայության դեպքում առանց մշտական հաստատության Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողները մինչև յուրաքանչյուր հաշվետու ժամանա-

կաշրջանին հաջորդող հարկային տարվա ապրիլի 20-ը ներառյալ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացնում շահութահարկի հաշվարկներ:

Ռեզիդենտ շահութահարկ վճարողը և մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողը պարտավոր են ընթացիկ հարկային տարվա յուրաքանչյուր եռամսյակի համար՝ մինչև տվյալ եռամսյակի վերջին ամսվա 20-ը ներառյալ, կատարել շահութահարկի կանխավճարներ նախորդ հարկային տարվա շահութահարկի գումարի 20 տոկոսի չափով, եթե տվյալ հարկ վճարողը չի ընտրել շահութահարկի կանխավճարների կատարման՝ սահմանված այլընտրանքային եղանակը:

Շահութահարկի կանխավճարները կատարում են նախորդ եռամսյակի ընթացքում ապրանքների մատակարարումից, աշխատանքների կատարումից և (կամ) ծառայությունների մատուցումից ստացվող եկամուտների երկու տոկոսի չափով, եթե մինչև ընթացիկ հարկային տարվա մարտի 20-ը ներառյալ հարկային մարմին են ներկայացրել հարկային մարմնի սահմանած ձևի հայտարարություն՝ շահութահարկի կանխավճարների կատարման այլընտրանքային եղանակի ընտրության վերաբերյալ:

Ռեզիդենտ շահութահարկ վճարողները, Հայաստանի Հանրապետությունում հաշվառված, կանոնները գրանցած պայմանագրային ներդրումային ֆոնդերը (բացառությամբ կենսաթոշակային և երաշխիքային ֆոնդերի), ինչպես նաև մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողները հաշվարկված՝ պետական բյուջե վճարման ենթակա շահութահարկի գումարները պետական բյուջե են վճարում մինչև հարկային տարվան հաջորդող հարկային տարվա ապրիլի 20-ը ներառյալ:

Հարկային գործակալները հաշվարկված և պահված շահութահարկի գումարները պետական բյուջե են վճարում մինչև ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողին եկամուտների վճարման եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ:

Հարկային գործակալի բացակայության դեպքում առանց մշտական հաստատության Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողները, ինչպես նաև մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողները հաշվարկված՝ պետական բյուջե վճարման ենթակա շահութահարկի գումարները պետական բյուջե են վճարում մինչև հարկային տարվան հաջորդող հարկային տարվա ապրիլի 20-ը ներառյալ:

Հարկման հատուկ համակարգերում գործունեություն իրականացնող անհատ ձեռնարկատերերը և նոտարները գործունեության այդ տեսակների մասով յուրաքանչյուր ամսվա համար սահմանված շահութահարկը վճարում են մինչև տվյալ հարկային տարվան հաջորդող հարկային տարվա ապրիլի 20-ը ներառյալ:

Պետական բյուջեից փոխհատուցման ենթակա շահութահարկի գումարները սահմանված չափից ավելի վճարված շահութահարկի գումարները Օրենսգրքի՝ հարկային վարչարարության մասով սահմանված կարգով և ժամկետներում մուտքագրվում են միասնական հաշվին: Սահմանված չափից ավելի վճարված շահութահարկի գումարները մուտքագրվում են միասնական հաշվին:

7. ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿ

Եկամտային հարկը հարկման օբյեկտի համար սահմանված կարգով, չափով և ժամկետներում պետական բյուջե վճարվող պետական հարկ է⁴⁰:

Վճարողներ են համարվում.

1. ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք,

⁴⁰ ՀՀ հարկային օրենսգիրք, ընդ. 04.10.2016 թ., հոդ. 139:

2. անհատ ձեռնարկատերերը և նոտարները, որպես ֆիզիկական անձինք, միայն անձնական եկամուտների մասով:

Հարկման օբյեկտ է համարվում.

1. ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար՝ ՀՀ աղբյուրներից և (կամ) ՀՀ-ից դուրս գտնվող աղբյուրներից ստացվող համախառն եկամուտը, բացառությամբ ՀՀ-ում հաշվառված ԱԶ-ների և նոտարների ձեռնարկատիրական եկամուտների,

2. ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար՝ ՀՀ աղբյուրներից ստացվող համախառն եկամուտը, բացառությամբ մշտական հաստատության միջոցով ՀՀ-ում գործունեություն իրականացնող և (կամ) մշտական հաստատության միջոցով ՀՀ աղբյուրներից եկամուտ ստացող ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց մշտական հաստատությանը վերագրվող եկամուտների, ինչպես նաև արտաքին տնտեսական գործունեությունից ստացվող եկամուտների:

Հարկման օբյեկտի հաշվառումն իրականացվում է.

1. հաշվարկման ենթակա աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների մասով՝ հաշվառման հաշվեգրման մեթոդով,

2. պասիվ եկամուտների, քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում կատարված աշխատանքների և (կամ) մատուցված ծառայությունների համար ստացվող եկամուտների, ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասով՝ հաշվառման դրամարկղային մեթոդով:

Հարկման բազա է համարվում.

1. ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար՝ հարկվող եկամուտը, որը որոշվում է որպես սահմանված համախառն եկամտի և նվազեցվող եկամուտների դրական տարբերություն,

2. ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար՝ հարկվող եկամուտը, որը որոշվում է որպես սահմանված համախառն եկամտի և նվազեցվող եկամուտների դրական տարբերություն:

ՀՀ աղբյուրներից ստացվող եկամուտներ են համարվում.

1. աշխատանքային պայմանագրերի շրջանակներում ստացվող աշխատավարձը և դրան հավասարեցված վճարումները,

2. քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում ստացվող եկամուտները,

3. պասիվ եկամուտները,

4. այլ եկամուտները:

Հարկման բազան որոշելու նպատակով նվազեցվող եկամուտներ են համարվում.

1. նպաստների գումարները, բացառությամբ ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների գումարների,

2. կենսաթոշակները, բացառությամբ կամավոր կենսաթոշակային բաղադրիչի մասնակցության շրջանակներում ստացվող կենսաթոշակների,

3. ապահովագրական հատուցումները,

4. զրհված զինծառայողների ընտանիքների անդամների և հաշմանդամ դարձած զինծառայողների՝ ՀՀ օրենսդրությամբ ստացվող միանվագ վճարները,

5. արյուն ու կրծքի կաթ հանձնելու և դոնորության այլ տեսակների համար ստացվող եկամուտները,

6. ժառանգության և (կամ) նվիրատվության կարգով ֆիզիկական անձանցից ստացվող գույքը և (կամ) դրամական միջոցները:

Դրույքաչափեր

Հարկման բազայի նկատմամբ եկամտային հարկը հաշվարկվում է հետևյալ դրույքաչափերով.

Ժամանակահատված	Եկամտային հարկի դրույքաչափը
2020 թ. հունվարի 1-ից	23 տոկոս
2021 թ. հունվարի 1-ից	22 տոկոս
2022 թ. հունվարի 1-ից	21 տոկոս
2023 թ. հունվարի 1-ից	20 տոկոս

Տոկոսների, ռոյալթիների, վարձակալական վճարների մասով եկամտային հարկը հաշվարկվում է 10 տոկոս դրույքաչափով:

Շահաբաժինների մասով եկամտային հարկը հաշվարկվում է 5 տոկոս դրույքաչափով:

Հաշվետու ժամանակաշրջան

Եկամտային հարկը հարկային գործակալի կողմից հաշվարկելու, պահելու և պետական բյուջե վճարելու դեպքերում հաշվարկման և վճարման համար հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր հաշվետու ամիսը:

ՀՀ անունից կնքված և վավերացված պայմանագրերի դրույթների համաձայն՝ եկամուտ վճարողի՝ հարկային գործակալի պարտավորությունից ազատված լինելու դեպքերում աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների, ինչպես նաև քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում կատարված աշխատանքների և (կամ) մատուցված ծառայությունների համար ստացվող եկամուտների մասով եկամտային հարկի հաշվարկման և վճարման հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր հաշվետու ամիսը:

Հաշվետու տարում ստացված հարկման բազայից եկամտային հարկի հաշվարկման և վճարման հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր հաշվետու տարին:

Հաշվարկի ներկայացում

Հարկային գործակալները մինչև յուրաքանչյուր ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ հարկային մարմին են ներկայացնում եկամտային հարկի հաշվարկ, որտեղ ներառվում են տվյալ հարկային գործակալից եկամուտներ ստացվող ֆիզիկական անձանց եկամուտների, այդ եկամուտներից հաշվարկված և պահված եկամտային հարկի վերաբերյալ անհատական տեղեկություններ:

Նոր աշխատողին աշխատանքի ընդունելուց հետո հարկային մարմին են ներկայացնում գրանցման հայտ, որտեղ ներառվում են անհատական տեղեկություններ:

Վճարում

Հարկային գործակալները հաշվարկված՝ պետական բյուջե վճարման ենթակա եկամտային հարկի գումարները պետական բյուջե են վճարում մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ, տարեկանի դեպքում՝ մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող հարկային տարվա ապրիլի 20-ը ներառյալ:

8. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԱՐԿ

Բնապահպանական հարկը բնապահպանական միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների գոյացման նպատակով պետական բյուջե վճարվող հարկ է⁴¹:

Վճարողներ են համարվում հարկման օբյեկտ համարվող գործունեություն և (կամ) գործառույթ իրականացնող կազմակերպությունները և ֆիզիկական անձինք:

Հարկման օբյեկտ են համարվում.

1. մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետումը,
2. ջրային ռեսուրս վնասակար նյութերի և (կամ) միացությունների արտահոսքը,
3. ընդերքօգտագործման, արտադրության և (կամ) սպառման թափոնները՝
 - ա) հատուկ հատկացված տեղերում տեղադրելը,
 - բ) հատուկ հատկացված տեղերում պահելը,
4. շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների՝
 - ա) ՀՀ տարածք ներմուծումը,
 - բ) ներմուծող-իրացնողների և/կամ արտադրող-իրացնողների կողմից ՀՀ տարածքում օտարումը:

Հարկման բազան հարկման օբյեկտի արժեքային կամ ֆիզիկական մեծությունը կամ այն բնութագրիչն է, որի հիման վրա դրույքաչափերով ու կարգով հաշվարկվում է հարկի գումարը (փաստացի ծավալ, շարժիչի հզորություն, մաքսային արժեք, ապրանքների արժեք՝ դրամական արտահայտությամբ՝ առանց ակցիզային հարկի, ԱԱՀ-ի և բնապահպանական հարկի):

Սահմանվում են նաև հարկման բազայի չափաքանակներ (թույլատրելի ծավալներ):

Դրույքաչափերը սահմանված են օրենսգրքով հարկման բազայի նկատմամբ:

⁴¹ ՀՀ հարկային օրենսգիրք, ընդ. 04.10.2016 թ., հոդ. 161:

Արտոնություններ

1. ՀՀ-ում գրանցված ավտոտրանսպորտային միջոցներից մթնոլորտային օդ վնասակար նյութեր արտանետելու համար հարկից ազատվում են.

ա) սոցապ մարմիններից արտոնյալ պայմաններով ավտոմեքենաներ ստացած հաշմանդամները,

բ) հիբրիդային և էլեկտրականությամբ սնուցվող շարժիչներով աշխատող ավտոտրանսպորտային միջոցների համար հարկ վճարողները,

գ) հաշվառումից ժամանակավորապես հանված ավտոտրանսպորտային միջոցների համար հարկ վճարողները:

2. ՀՀ-ում չգրանցված ավտոտրանսպորտային միջոցներից մթնոլորտային օդ վնասակար նյութեր արտանետելու համար հարկից ազատվում են.

ա) ՀՀ-ում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունները և հյուպատոսական հիմնարկները,

բ) ՀՀ մարդասիրական օգնության և բարեգործական ծրագրերի շրջանակներում փոխադրումներ իրականացնողները,

գ) ՌԴ զինված ուժերը:

3. Շրջակա միջավայրին վնաս պատճառող ներմուծվող ապրանքների համար հարկից ազատվում են այդ ապրանքները տարանցիկ տեղափոխողները:

4. Արտադրության և (կամ) սպառման թափոնները հատուկ հատկացված տեղերում տեղադրելու և (կամ) պահելու համար հարկից ազատվում են ֆիզիկական անձինք՝ սպառման թափոնների համար:

Հաշվետու ժամանակաշրջանը յուրաքանչյուր հաշվետու եռամսյակն է:

Հարկը հաշվարկվում է հարկման բազայի և դրույքաչափերի հիման վրա՝ հաշվի առնելով հարկման բազայի չափաքանակները:

Հարկ վճարողները մինչև յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ բնապահպանական տեսչություն և հարկային մարմին են ներկայացնում բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների միասնական հարկային հաշվարկներ:

Հարկի գումարները պետական բյուջե են վճարվում մինչև հաշվետու եռամս-
յակին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ (արտանետման շարժական աղբյուրնե-
րից մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետման համար՝ մինչև դրանց
տարեկան տեխնիկական զննությունը):

9. ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՀԱՐԿ

Ճանապարհային հարկը ՀՀ ավտոմոբիլային ճանապարհների ցանցի զար-
գացման, ՀՀ ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհ-
ների շինարարության, նորոգման և պահպանման համար անհրաժեշտ դրամա-
կան միջոցների գոյացման նպատակով պետական բյուջե վճարվող հարկ է⁴²:

Վճարողներ են համարվում հարկման օբյեկտ համարվող գործունեություն
և/կամ գործառույթ իրականացնող՝ ավտոտրանսպորտային միջոցների սեփակա-
նատերերը, ավտոմոբիլային ճանապարհներից օգտվող կազմակերպությունները
և ֆիզիկական անձինք, ՀՀ մուտք գործողները, գովազդ տեղադրողները:

Հարկման օբյեկտ են համարվում.

1. ՀՀ-ում չգրանցված բեռնատար ավտոտրանսպորտային միջոցներով ՀՀ
ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելը,
2. ՀՀ ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհնե-
րին գովազդ տեղադրելը:

Հարկման բազան հարկման օբյեկտի արժեքային կամ ֆիզիկական մեծությու-
նը կամ այն բնութագրիչն է, որի հիման վրա դրույքաչափերով ու կարգով հաշ-
վարկվում է հարկի գումարը (թույլատրելի առավելագույն զանգված՝ արտահայտ-
ված տոննաներով, գովազդային վահանակի մակերես՝ արտահայտված քառա-
կուսի մետրերով):

Դրույքաչափերը սահմանված են օրենսգրքով:

⁴² ՀՀ հարկային օրենսգիրք, ընդ. 04.10.2016 թ., հոդ. 183:

ՀՀ-ում չգրանցված բեռնատար ավտոտրանսպորտային միջոցներով ՀՀ ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու համար հարկը հաշվարկվում է ՀՀ մուտքի յուրաքանչյուր 15 օրվա համար՝ ըստ ավտոտրանսպորտային միջոցի թույլատրելի առավելագույն զանգվածի: ՀՀ ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներին գովազդ տեղադրելու համար տարեկան դրույքաչափերն են.

- ա) միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհներին տեղադրվող գովազդային վահանակի մակերեսի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար՝ 10000 դրամ,
- բ) հանրապետական և մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհներին տեղադրվող գովազդային վահանակի մակերեսի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար՝ 7500 դրամ:

Հարկի արտոնություններ

ՀՀ-ում չգրանցված բեռնատար ավտոտրանսպորտային միջոցներով ՀՀ ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու համար հարկի վճարումից ազատվում են.

- ա) ՀՀ-ում հավատարմագրված օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցչությունները և հյուպատոսական հիմնարկները՝ իրենց պաշտոնական օգտագործման բեռնատար ավտոտրանսպորտային միջոցների համար,
- բ) բեռնատար ավտոտրանսպորտային միջոցներով ՀՀ տարածք մարդասիրական և բարեգործական ծրագրերի շրջանակներում բեռներ փոխադրողները,
- գ) ՌԴ ռազմակայաններ բեռնատար ավտոտրանսպորտային միջոցներով փոխադրումներ իրականացնողները:

Հարկը հաշվարկվում է հարկման յուրաքանչյուր օբյեկտի համար՝ հարկման բազայի և դրույքաչափերի հիման վրա:

ՀՀ-ում չգրանցված բեռնատար ավտոտրանսպորտային միջոցներով ՀՀ ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու համար պետական բյուջե վճարման են-

թակա հարկը հաշվարկվում և վճարվում է ՀՀ մուտք գործելիս, ՀՀ ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներին գովազդ տեղադրելու համար՝ յուրաքանչյուր հաշվետու եռամսյակի համար տարեկան դրույքաչափի արտադրյալի ¼-ի չափով՝ հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ, որին հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում պետական ճանապարհային մարմին են ներկայացնում վճարումը հավաստող անդորրագրի պատճենը:

10. ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐ

Բնօգտագործման վճարը պետական սեփականություն համարվող բնական պաշարների արդյունավետ և համալիր օգտագործման, ինչպես նաև բնական պաշարների օգտագործումը փոխհատուցելու նպատակով այդ պաշարների օգտագործման համար ՀՀ պետական բյուջե վճարվող վճար է⁴³:

Վճարողներ են համարվում վճարի օբյեկտ համարվող գործունեություն և (կամ) գործառույթ իրականացնող կազմակերպությունները և ֆիզիկական անձինք:

Վճարի օբյեկտներ են համարվում.

1. մակերևութային ջրերի օգտագործումը,
2. ստորերկրյա քաղցրահամ և թերմալ ջրերի արդյունահանումը,
3. ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանումը,
4. աղի արդյունահանումը,
5. պինդ ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանումը,
6. կենսապաշարների օգտագործումը:

Վճարի բազան օբյեկտի արժեքային կամ ֆիզիկական մեծությունը կամ այն բնութագրիչն է, որի հիման վրա դրույքաչափերով ու կարգով հաշվարկվում է վճարի գումարը (ջրի, աղի փաստացի ծավալը, կենսապաշարի ծավալը, քաշը կամ միավորը (հատը)):

⁴³ ՀՀ հարկային օրենսգիրք, ընդ. 04.10.2016 թ., հոդ. 197:

Վճարի հաշվարկման և դրույքաչափերի կիրառության համար սահմանվում են վճարի բազայի չափաքանակներ (ջրօգտագործման, ստորերկրյա քաղցրահամ և թերմալ ջրերի արդյունահանման, անտառանյութի օգտագործման ծավալները):

Դրույքաչափերը սահմանվում են Օրենսգրքով՝ վճարի բազայի նկատմամբ:

Վճարի հաշվարկման և վճարման հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր հաշվետու եռամսյակը:

Վճարողները մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարի միասնական հարկային հաշվարկները ներկայացնում են հարկային մարմին (նաև բնապահպանական, ընդերքի պետական տեսչություններ՝ հավելվածով):

Պետական բյուջե վճարման ենթակա վճարի գումարները պետական բյուջե են վճարվում մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ:

Վճարի գծով արտոնությունները սահմանվում են ՀՀ օրենքներով:

11. ԱՆՉԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿ

Անշարժ գույքի հարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի համար ՀՀ համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողի տնտեսական գործունեության արդյունքներից⁴⁴:

Անկախ սեփականության իրավունքի առկայությունից՝ անշարժ գույքի հարկ վճարվում է նաև մշտական օգտագործման տրամադրված՝ պետական սեփականություն հանդիսացող հողերի հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի համար:

⁴⁴ ՀՀ հարկային օրենսգիրք, ընդ. 04.10.2016 թ., հոդ. 224:

Վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական անհատներ, բացառությամբ պետական, համայնքային կառավարչական հիմնարկների, ՀՀ ԿԲ-ի:

Մշտական օգտագործման տրամադրված պետական սեփականություն հանդիսացող հողի համար հարկը վճարում է հողի մշտական օգտագործողը:

Հարկման օբյեկտ է համարվում.

անշարժ գույքը՝ հողամասերը (ըստ նպատակային և գործառնական նշանակության) և (կամ) դրանց բարելավումները (շինություններ՝ բնակելի, արտադրական, հասարակական նշանակության, բազմաբնակարան բնակելի շենք, ավտոտնակ և այլն):

Հարկման բազա են համարվում.

1. հողամասի և շինությունների կադաստրային արժեքները (Օրենսգրքի բաղկացուցիչ մասը կազմող հավելված 1),
2. գյուղատնտեսական նշանակության հողերի համար՝ կադաստրային գնահատման կարգով հաշվարկված հաշվարկային զուտ եկամուտը (Օրենսգրքի բաղկացուցիչ մասը կազմող հավելված 2):

Գնահատումը կամ վերագնահատումը կատարում է անշարժ գույքի կադաստր վարող մարմինը 3 տարին մեկ անգամ՝ գնահատման հարկային տարվա հուլիսի 1-ի դրությամբ հաշվառված տվյալներով:

Դրույքաչափեր

Հարկը հաշվարկվում է ըստ հետևյալ տարեկան դրույքաչափերի.

1. գյուղատնտեսական նշանակության հող հանդիսացող անշարժ գույքի համար՝ 15%,

2. ոչ գյուղատնտեսական նշանակության հող հանդիսացող անշարժ գույքի համար՝

ա) արդյունաբերության, տրանսպորտի, կապի, ռադիոհեռարձակման և այլն, ինչպես նաև ջրային ֆոնդի հողերի համար.

- բնակավայրի ներսում՝ 1%,
- բնակավայրից դուրս՝ 0.5%,

- բ) գյուղական համայնքների վարչական սահմաններում ընդգրկված բնակելի կառուցապատման հող հանդիսացող անշարժ գույքի համար՝ 0.6%,
- գ) անտառային ֆոնդի հողերի համար՝ 1%,
- դ) ոչ գյուղատնտեսական նշանակության մյուս հողերի համար՝ 1%,

3. բնակելի նշանակության շինությունների, բազմաբնակարան բնակելի շենքի բնակարանի, բազմաբնակարան շենքի ոչ բնակելի տարածքի, անավարտ կիսակառույց շինությունների և նոր կառուցված հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի համար.

Հարկման բազա	Հարկի դրույքաչափը
մինչև 3 մլն դրամը ներառյալ	0%
3 մլն դրամից ավելի՝ մինչև 10 մլն դրամը ներառյալ	100 դրամ՝ գումարած հարկման բազայի 3 մլն դրամը գերազանցող մասի 0,1%-ը
10-20 մլն դրամը ներառյալ	7100 դրամ՝ գումարած հարկման բազայի 10 մլն դրամը գերազանցող մասի 0,2%-ը
20-30 մլն դրամը ներառյալ	27100 դրամ՝ գումարած հարկման բազայի 20 մլն դրամը գերազանցող մասի 0,4%-ը
30-40 մլն դրամը ներառյալ	67100 դրամ՝ գումարած հարկման բազայի 30 մլն դրամը գերազանցող մասի 0,6%-ը
40 մլն դրամից ավելի	127100 դրամ՝ գումարած հարկման բազայի 40 մլն դրամը գերազանցող մասի 1%-ը

4. հասարակական և արտադրական նշանակության շինություն հանդիսացող անշարժ գույքի համար՝ 0,3%,

5. ավտոտնակ հանդիսացող անշարժ գույքի համար՝ 0,2%:

Անշարժ գույքից ազատվում են.

- ա) պետական արգելանոցները և արգելավայրերը, ազգային և ծառաբանական զբոսայգիները, բուսաբանական այգիները,
- բ) բնակավայրերում պետական սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման հողերը,
- գ) ջրամբարները,
- դ) պետական անտառային ֆոնդի հողերը և այլն:

Անշարժ գույքի հարկի պարտավորությունն առաջանում է դրանով հարկման օբյեկտի կամ դրա մի մասի նկատմամբ սեփականության կամ մշտական օգտա-

գործման իրավունքի պետական գրանցման ամսվան հաջորդող ամսվա 1-ից, դադարումը՝ դադարելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից:

Հաշվետու ժամանակաշրջան

Անշարժ գույքի հարկի հաշվարկման և վճարման համար հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր հաշվետու տարին:

Հաշվարկ

Հաշվառող մարմինները, հիմք ընդունելով անշարժ գույքի կադաստր վարող մարմնից ստացված տեղեկությունները, հաշվարկում են հարկի գումարները և դրա վերաբերյալ տեղեկությունները մինչև ընթացիկ հարկային տարվա նոյեմբերի 1-ը փակցնում համայնքի վարչական շենքի տեսանելի տեղում և (կամ) տեղադրում իրենց էլեկտրոնային կայքերում: Նաև կարող են հարկի վճարման ծանուցագրեր ներկայացնել հարկ վճարողներին (հանձնել առձեռն կամ ուղարկել փոստով): Տեղեկություն չփակցնելը կամ ծանուցագիր չներկայացնելը անշարժ գույքի հարկ վճարողին չի ազատում հարկային պարտավորություններն ամբողջությամբ կատարելու պարտականությունից:

Հարկ վճարողներն իրենց պարտավորությունների վերաբերյալ տեղեկանք կամ տեղեկություններ ստանալու նպատակով կարող են դիմել հաշվառող մարմիններ: Վերջիններս դիմումները ստանալուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, տրամադրում են նշված տեղեկանքները կամ տեղեկությունները:

Անշարժ գույքի կադաստր վարող մարմինն ամփոփ տեղեկությունները մինչև գնահատման (վերագնահատման) հարկային տարվա սեպտեմբերի 1-ը ներառյալ ներկայացնում է հաշվառող մարմիններին:

Վճարում

Կազմակերպությունները և ֆիզիկական անձինք անշարժ գույքի հարկի տարեկան գումարներն անշարժ գույքի գտնվելու վայրի համայնքի բյուջե են վճարում մինչև հարկային տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ:

12. ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿ

Փոխադրամիջոցների գույքահարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող փոխադրամիջոցների համար սահմանված կարգով ՀՀ համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված է հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից⁴⁵:

Վճարողներ են համարվում կազմակերպությունները և ֆիզիկական անձինք, բացառությամբ ՀՀ պետական, համայնքային կառավարչական հիմնարկների և ՀՀ ԿԲ-ի:

Հարկման օբյեկտ են համարվում հետևյալ փոխադրամիջոցները.

1. ավտոմոբիլային տրանսպորտի միջոց,
2. ջրային փոխադրամիջոց (շարժիչով աշխատող),
3. մոտոցիկլետ,
4. ձյունագնաց,
5. մոտոամենագնաց (քվադրոցիկլ):

Հարկման բազա է համարվում հարկման օբյեկտ համարվող փոխադրամիջոցի քաշող շարժիչի հզորությունը (ձիաուժ կամ կիլովատ):

Դրույքաչափեր

1. Ավտոմոբիլային տրանսպորտի միջոցների համար հարկի տարեկան գումարը հաշվարկվում է հետևյալ դրույքաչափերով.

ա) մինչև 10 նստատեղ ունեցող մարդատար ավտոմեքենաների համար, եթե հարկման բազան՝

- 1-120 ձիաուժ է, ապա յուրաքանչյուր ձիաուժի համար՝ 200 դրամ,
- 121-250 ձիաուժ է, ապա յուրաքանչյուր ձիաուժի համար՝ 300 դրամ, ինչպես նաև 150 ձիաուժը գերազանցող յուրաքանչյուր ձիաուժի համար՝ լրացուցիչ 1000 դրամ,

⁴⁵ ՀՀ հարկային օրենսգիրք, ընդ. 04.10.2016 թ., հոդ. 239:

- 251 և ավելի ձիաուժ է, ապա յուրաքանչյուր ձիաուժի համար՝ 500 դրամ, ինչպես նաև 150 ձիաուժը գերազանցող յուրաքանչյուր ձիաուժի համար՝ լրացուցիչ 1000 դրամ,

բ) 10 և ավելի նստատեղ ունեցող մարդատար և բեռնատար ավտոմեքենաների համար, եթե հարկման բազան՝

- 1-200 ձիաուժ է, ապա յուրաքանչյուր ձիաուժի համար՝ 100 դրամ,
- 201 և ավելի ձիաուժ է, ապա յուրաքանչյուր ձիաուժի համար՝ 200 դրամ:

2. Մոտոցիկլետների համար փոխադրամիջոցների գույքահարկի տարեկան գումարը հաշվարկվում է հարկման բազայի յուրաքանչյուր ձիաուժի համար 40 դրամ դրույքաչափով:

3. Ջրային փոխադրամիջոցների, ձյունագնացների և մոտոամենագնացների համար փոխադրամիջոցների գույքահարկի տարեկան գումարը հաշվարկվում է հարկման բազայի յուրաքանչյուր ձիաուժի համար 150 դրամ դրույքաչափով:

Ավտոմոբիլային տրանսպորտային միջոցի թողարկման ամսաթիվը ներառող հարկային տարվա և դրան հաջորդող 2 հարկային տարիներից յուրաքանչյուր հարկային տարվա համար հարկը հաշվարկվում է 100%-ով: Հաջորդող 3-րդ և հետագա յուրաքանչյուր հարկային տարվա համար հարկի գումարը պակասեցվում է 10%-ի չափով, բայց ոչ ավելի, քան գույքահարկի գումարի 50%-ը: Բեռնատար կամ բեռնաուղևորատար ավտոմոբիլային տրանսպորտի միջոցի թողարկման ամսաթիվը ներառող հարկային տարվան հաջորդող 20-րդ հարկային տարվանից սկսած՝ գույքահարկ չի հաշվարկվում և չի վճարվում:

Փոխադրամիջոցների հարկման բազան կիլովատներով արտահայտված լիներու դեպքում հարկի տարեկան գումարը հաշվարկվում է՝ համապատասխան հզորության նկատմամբ կիրառելով 1.36 գործակից:

Փոխադրամիջոցների գույքահարկից ազատվում են.

ա) պետական սոցապ մարմիններից արտոնյալ պայմաններով ավտոմեքենաներ ստացած հաշմանդամները՝ այդ ավտոմեքենաների մասով,

բ) փոստային կապի ազգային օպերատորը և այլն:

Հարկի պարտավորությունն առաջանում է հարկման օբյեկտի կամ դրա մի

մասի նկատմամբ սեփականության իրավունքի ծագման ամսվան հաջորդող ամսվա 1-ից, դադարում՝ դադարելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից:

Հաշվետու ժամանակաշրջան

Փոխադրամիջոցների գույքահարկի հաշվարկման և վճարման համար հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր հաշվետու տարին:

Հաշվարկ

Հաշվարկվում է հարկման բազայի և դրույքաչափերի բազմապատկումով՝ հաշվի առնելով արտոնությունները:

Հաշվառող մարմինները, հիմք ընդունելով շարժական գույքի կադաստր վարող մարմնից ստացված տեղեկությունները, հաշվարկում են հարկի գումարները և մինչև ընթացիկ հարկային տարվա նոյեմբերի 1-ը վճարողներին ներկայացնում հարկի վճարման ծանուցագրեր (այդ թվում՝ ուղարկում են փոստով կամ հանձնում առձեռն): Սահմանված ժամկետում ծանուցագիր չներկայացնելը վճարողին չի ազատում հարկային պարտավորությունները կատարելու պարտականությունից: Հարկ վճարողներն իրենց պարտավորությունների վերաբերյալ տեղեկանք կամ տեղեկություններ ստանալու նպատակով կարող են դիմել հաշվառող մարմիններ: Վերջիններս դիմումները ստանալուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, տրամադրում են տեղեկություններ կամ տեղեկանքներ:

Փոխադրամիջոցների վերաբերյալ տեղեկությունները շարժական գույքի կադաստր վարող լիազոր մարմինը մինչև տվյալ հարկային տարվա օգոստոսի 1-ը ներառյալ ներկայացնում է հաշվառող մարմիններին:

Վճարում

Կազմակերպությունները և ֆիզիկական անձինք փոխադրամիջոցների գույքահարկի տարեկան գումարներն իրենց պետական գրանցման (հաշվառման) վայրի համայնքի բյուջե են վճարում մինչև հարկային տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ:

Ֆիզիկական անձինք տարեկան տեխնիկական զննության ենթակա փոխադրամիջոցների համար հարկի գծով հարկային պարտավորություններն ամբողջությամբ կատարում են մինչև փոխադրամիջոցները տվյալ հարկային տարվա տեխնիկական զննության ներկայացնելը:

13. ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՐԿ

Շրջանառության հարկը հարկման օբյեկտ համարվող գործունեության տեսակների իրականացման համար սահմանված կարգով, չափով և ժամկետներում պետական բյուջե վճարվող՝ ԱԱՀ-ին և (կամ) շահութահարկին փոխարինող պետական հարկ է⁴⁶:

Ռեզիդենտ առևտրային կազմակերպությունների համար շրջանառության հարկը փոխարինում է ԱԱՀ-ին (60%) և (կամ) շահութահարկին (40%), ԱԶ-ների և նոտարների համար՝ ԱԱՀ-ին:

Վճարողներ են համարվում.

1. ռեզիդենտ առևտրային կազմակերպությունները, ԱԶ-ները և նոտարները, եթե տվյալ հարկային տարվա հունվարի 1-ից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը, եթե հարկ վճարողը մինչև տվյալ հարկային տարվա փետրվարի 20-ը ներառյալ հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով՝ հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն,

2. այն ռեզիդենտ առևտրային կազմակերպությունը, ԱԶ-ն և նոտարը, որոնց իրացման շրջանառությունը նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով չի գերազանցել 115 մլն դրամը:

Հարկ վճարողներ չեն կարող համարվել բանկերը, վարկային կազմակերպությունները, ապահովագրական ընկերությունները, գրավատները և այլն:

Հարկման օբյեկտ են համարվում ապրանքների մատակարարումը, աշխատանքների կատարումը և (կամ) ծառայությունների մատուցումը:

Հարկման բազան հարկման օբյեկտ համարվող գործարքների իրացման շրջանառությունն է:

Դրույքաչափեր

Շրջանառության հարկը հարկման բազայի նկատմամբ հաշվարկվում է հետևյալ դրույքաչափերով.

⁴⁶ ՀՀ հարկային օրենսգիրք, ընդ. 04.10.2016 թ., հոդ. 253:

Եկամտի տեսակ	Դրույքաչափ (%)
Առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից ստացվող եկամուտներ	5
ՀՀ կառավարության սահմանած ցանկում ներառված երկրորդային հումքի առևտրական գործունեությունից ստացվող եկամուտներ	1,5
Խմբագրությունների կողմից թերթերի օտարումից եկամուտներ	1,5
Արտադրական գործունեությունից ստացվող եկամուտներ	3,5
Վարձակալական վճար, տոկոս, անշարժ գույքի և ավտոտրանսպորտային միջոցների օտարումից ստացվող եկամուտներ	10
Նոտարական գործունեությունից ստացվող եկամուտներ	10
Վիճակախաղերի կազմակերպման գործունեությունից ստացվող եկամուտներ	25
Հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունից ստացվող եկամուտներ	6
Այլ գործունեությունից ստացվող եկամուտներ	5

Հաշվետու ժամանակաշրջանի համար առևտրական գործունեությունից ձևավորվող հարկման բազայի մասով հարկի գումարը նվազեցվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում անմիջական վաճառքի նպատակով ձեռք բերված ապրանքների գծով կատարված՝ հաշվարկային փաստաթղթերով հիմնավորված ծախսերի 4%-ը կազմող գումարի չափով: Եթե նվազեցումներից հետո հարկի գումարը կազմում է հարկման բազայի 1,5%-ից պակաս գումար, ապա ապրանքներ ձեռք բերելու ծախսերի գծով նվազեցումը կատարվում է այն չափով, որ հարկի գումարը կազմի հարկման բազայի 1,5%-ը: Չնվազեցված մասը նվազեցվում է հետագա հաշվետու ժամանակաշրջանի համար առևտրական գործունեությունից ձևավորվող հարկման բազայի նկատմամբ հաշվարկվող հարկի գումարից:

Հաշվետու ժամանակաշրջան

Հարկի հաշվարկման և վճարման համար հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր հաշվետու եռամսյակը:

Հաշվարկ

Հարկ վճարողները մինչև յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ հարկային մարմին են ներկայացնում հարկի հաշ-

վարկներ:

Վճարում

Վճարողները հաշվարկված՝ պետական բյուջե վճարման ենթակա հարկի գումարները պետական բյուջե են վճարում մինչև յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ:

Շրջանառության հարկ վճարողի համար պահպանվում են այլ հարկերի և վճարների հաշվարկման կարգերը:

Հարկ վճարողներն ազատվում են շահութահարկի կանխավճարների և հարկային գործակալի համար սահմանված պարտավորությունների կատարումից:

14. ՄԻԿՐՈՃԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Միկրոձեռնարկատիրություն է համարվում սահմանված չափանիշները բավարարող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունների և ֆիզիկական անձանց կողմից ձեռնարկատիրական եկամուտ ստանալու նպատակով իրականացվող գործունեությունը:

Ռեզիդենտ առևտրային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը միկրոձեռնարկատիրության սուբյեկտներ են համարվում հետևյալ դեպքերում և ժամկետներում.

1. տվյալ հարկային տարվա հունվարի 1-ից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը, եթե հարկ վճարողը մինչև տվյալ հարկային տարվա փետրվարի 20-ը ներառյալ,

2. հարկային տարվա ընթացքում պետական գրանցում ստացած առևտրային կազմակերպությունը կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված ֆիզիկական անձը՝ համապատասխանաբար, որպես կազմակերպություն պետական գրանցման կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման օրվանից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը, եթե հարկ վճարողը մինչև համապատասխա-

նաբար՝ որպես կազմակերպություն պետական գրանցման կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման օրվան հաջորդող 20-րդ օրը ներառյալ,

3. մինչև հարկային տարվա փետրվարի 20-ը ներառյալ գործունեություն չիրականացրած (գործունեությունը դադարեցրած) առևտրային կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը գործունեությունը վերսկսելու օրվանից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը, եթե հարկ վճարողը մինչև գործունեությունը վերսկսելու օրվան հաջորդող 20-րդ օրը ներառյալ,

4. մինչև տվյալ հարկային տարին սկսվելը պետական հաշվառումից դուրս եկած անհատ ձեռնարկատերը տվյալ հարկային տարում կրկին որպես անհատ ձեռնարկատեր հաշվառվելու օրվանից մինչև հարկային տարվա ավարտը, եթե հարկ վճարողը մինչև կրկին որպես անհատ ձեռնարկատեր հաշվառվելու օրվան հաջորդող 20-րդ օրը ներառյալ,

5. հարկային տարվա ընթացքում պետական հաշվառումից դուրս եկած անհատ ձեռնարկատերը տվյալ հարկային տարում կրկին որպես անհատ ձեռնարկատեր հաշվառվելու օրվանից մինչև հարկային տարվա ավարտը, եթե հարկ վճարողը մինչև կրկին որպես անհատ ձեռնարկատեր հաշվառվելու օրվան հաջորդող 20-րդ օրը ներառյալ.

հարկային մարմին են ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարություն:

Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը միկրոձեռնարկատիրության սուբյեկտ է համարվում, եթե հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով՝ միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարություն գործունեության իրականացման որևէ ժամանակահատվածի (հարկային տարվա ընթացքում ընտրված ցանկացած հաշվետու ամսվա կամ մեկից ավելի հաշվետու ամիսների կամ հարկային տարվա կամ հարկային տարիների) համար՝ մինչև տվյալ գործունեության տեսակն իրականացնելը կամ տվյալ գործունեության տեսակը շարունակելը: Հարկային մարմինը հայտարարությունը ներկայացնելու օրվան հաջորդող մեկ աշխատանքային օրվա ըն-

թացքում տրամադրում է իր կողմից սահմանված ձևով՝ միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ արտոնագիր:

Միկրոձեռնարկատիրության սուբյեկտ կարող են համարվել այն ռեզիդենտ առևտրային կազմակերպությունը և անհատ ձեռնարկատերը, որոնց՝ նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը չի գերազանցել 24 միլիոն դրամը, ինչպես նաև անհատ ձեռնարկատեր չհանդիսացող այն ֆիզիկական անձը, որի՝ նախորդ հարկային տարվա ընթացքում Օրենսգրքի բաղկացուցիչ մասը կազմող հավելված 3-ով սահմանված գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը չի գերազանցել է 24 միլիոն դրամը:

Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը կարող է համարվել միկրոձեռնարկատիրության սուբյեկտ, եթե զբաղվում է բացառապես Օրենսգրքի բաղկացուցիչ մասը կազմող հավելված 3-ով սահմանված գործունեության տեսակներով:

Միկրոձեռնարկատիրության սուբյեկտներ չեն կարող համարվել.

1. բանկերը, վարկային կազմակերպությունները, ապահովագրական ընկերությունները,

2. խորհրդատվական, իրավաբանական, հաշվապահական, աուդիտորական, ինժեներական ծառայություններ մատուցողները,

3. Երևան քաղաքի վարչական սահմաններում առևտրական (առք ու վաճառքի) գործունեությամբ զբաղվող կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը,

4. իրենց գործունեության ընթացքում անհատ ձեռնարկատեր չհանդիսացող այլ ֆիզիկական անձանց աշխատանքն օգտագործող՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք,

5. կազմակերպություններին կամ անհատ ձեռնարկատերերին ապրանքների մատակարարման գործարքներ իրականացրած՝ առևտրական (առք ու վաճառքի) գործունեությամբ զբաղվող կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը և այլն:

Միկրոձեռնարկատիրության սուբյեկտներն ազատվում են միկրոձեռնարկատիրության մասով առաջացող բոլոր պետական հարկերի հաշվարկման և պետական բյուջե վճարման պարտավորությունից:

Միկրոձեռնարկատիրության սուբյեկտները չեն ազատվում.

1. Հայաստանի Հանրապետություն ներմուծվող (այդ թվում ԵԱՏՄ անդամ պետություններից) ապրանքների մասով Օրենսգրքով սահմանված կարգով հարկերի հաշվարկման և պետական բյուջե վճարման պարտավորությունից,

2. միկրոձեռնարկատիրության մեջ ներգրավված վարձու աշխատողներին հարկային գործակալի կողմից վճարվող (հաշվարկվող) հարկվող եկամուտներից յուրաքանչյուր վարձու աշխատողի համար ամսական հինգ հազար դրամի չափով եկամտային հարկ հաշվարկելու և վճարելու պարտավորությունից (այդ թվում ոչ ամբողջական ամսվա համար), որը այդ եկամուտների մասով համարվում է եկամտային հարկի գծով վերջնական հարկային պարտավորություն,

3. Օրենսգրքով սահմանված կարգով ակցիզային հարկի, բնապահպանական հարկի և (կամ) ճանապարհային հարկի հաշվարկման և պետական բյուջե վճարման պարտավորությունից:

Միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը (բացառությամբ բացառապես Օրենսգրքի բաղկացուցիչ մասը կազմող հավելված 3-ով սահմանված գործունեության տեսակների մասով միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվող անհատ ձեռնարկատերերի) մինչև հարկային տարվան հաջորդող հարկային տարվա փետրվարի 1-ը ներառյալ հարկային մարմին են ներկայացնում հաշվետվություն՝ նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության վերաբերյալ:

Միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվող կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը մինչև յուրաքանչյուր հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ հարկային մարմին են ներկայացնում եկամտային հարկի հաշվարկ՝ միկրոձեռնարկատիրությունում ներգրավված վարձու աշխատողների համար:

Միկրոձեռնարկատիրության սուբյեկտներն ազատվում են հարկային մարմին Օրենսգրքով սահմանված այլ հարկային հաշվարկներ ներկայացնելուց, բացառությամբ.

1. ԱԱՀ և ակցիզային հարկի միասնական հաշվարկի,

2. բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների միասնական հարկային հաշվարկի և այլն:

Միկրոձեռնարկատիրության մեջ ներգրավված վարձու աշխատողներին հարկային գործակալի կողմից վճարվող (հաշվարկվող) հարկվող եկամուտներից յուրաքանչյուր վարձու աշխատողի համար ամսական հինգ հազար դրամի չափով եկամտային հարկի գումարները հաշվարկվում և պետական բյուջե են վճարվում մինչև եկամուտների վճարման (հաշվարկման) ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ:

Ռեզիդենտ առևտրային կազմակերպությունը և անհատ ձեռնարկատերը միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելուց դադարելու պահից.

1. շրջանառության հարկի համակարգ անցնելու դեպքում տվյալ հարկային տարվա մնացած ժամանակահատվածում հարկային պարտավորությունները հաշվարկում և կատարում են սահմանված կարգով՝ միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելուց դադարելու պահից հետո ձևավորվող հարկման բազաների մասով,

2. հարկման ընդհանուր համակարգ անցնելու դեպքում տվյալ հարկային տարվա մնացած ժամանակահատվածում հարկային պարտավորությունները հաշվարկում և կատարում են սահմանված կարգով՝ միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելուց դադարելու պահից հետո ձևավորվող հարկման բազաների մասով:

Հավելված 3

Ցանկ

գործունեության տեսակների, որոնք կարող են իրականացվել միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվող՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից.

Գործունեության տեսակները	
1.	Բնակչության պատվերով կատարվող՝
1)	կոշիկի և կաշվե գալանտերեայի և համանման այլ արտադրատեսակների արտադրություն, կոշիկի և կաշվե գալանտերեայի պարագաների արտադրություն, կոշիկի և կաշվե արտադրատեսակների նորոգում
2)	հագուստի արտադրություն և նորոգում
3)	գլխարկների արտադրություն և նորոգում
4)	գորգերի և գորգագործական արտադրատեսակների արտադրություն և նորոգում
5)	փայտյա իրերի պատրաստում, կահույքի և տան կահավորանքի նորոգում
6)	ոչ թանկարժեք զարդերի արտադրություն և նորոգում
7)	համակարգչային տեխնիկայի, հեռուստացույցների, լվացքի մեքենաների, օդորակիչների և այլ կենցաղային տեխնիկայի նորոգում, ծրագրային սպասարկում
8)	հեծանիվների և հաշմանդամների սայլակների արտադրություն, անձնական օգտագործման և կենցաղային այլ արտադրատեսակների նորոգում
9)	տնտեսական և գեղագարդ խեցեգործական արտադրատեսակների արտադրություն
10)	այլ ճենապակե և խեցեգործական արտադրատեսակների արտադրություն
11)	թիթեղագործական գործունեություն
2.	Ժամացույցների, ժամանակաչափ սարքերի նորոգում, երաժշտական գործիքների նորոգում
3.	Նեղ մասնագիտական գիտելիքների ձեռքբերման այլ դասընթացներ
4.	Լեզուների ուսուցման դասընթացներ
5.	Բարձրագույն և այլ հաստատություններ ընդունվելու համար նախապատրաստական դասընթացներ
6.	Պարեր, երգեցողություն դասավանդողների գործունեություն
7.	Կատարողական արվեստի բնագավառում գործունեություն, կատարողական արվեստի բնագավառում օժանդակ գործունեություն
8.	Ստեղծագործական գործունեություն
9.	Խնջույքավարների գործունեություն
10.	Կրթական գործունեություն և արտադպրոցական դաստիարակություն մարմնամարզության և սպորտի բնագավառում
11.	Մասնավոր տնային տնտեսություններում ծառայությունների մատուցում (առանց տարբերակման) սեփական սպառման համար
12.	Դարբնոցային գործունեություն
13.	Զբոսաշրջային տների միջոցով հյուրանոցային ծառայությունների մատուցում (այդ թվում՝ այդ ծառայությունների հետ անմիջականորեն կապված՝ հանրային սննդի (նախաճաշ, ճաշ, ընթրիք) ոլորտի գործունեությունը):

15. ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔ

Պետական տուրքը պետական մարմինների լիազորությունների իրականացմամբ պայմանավորված ծառայությունների կամ գործողությունների համար իրավաբանական և ֆիզիկական անձանցից ՀՀ պետական և (կամ) համայնքի բյուջեներ մուծվող պարտադիր վճար է⁴⁷:

Պետական տուրք գանձվում է.

1. դատարան տրվող հայցադիմումների, դիմումների, գանգատների, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի կրկնօրինակներ տալու համար,
2. նոտարի կողմից նոտարական գործողություններ կատարելու համար,
3. քաղաքացիական կացության ակտեր գրանցելու համար,
4. հյուպատոսական ծառայություններ կամ գործողություններ իրականացնելու համար,
5. պետական գրանցման, լիցենզիաներ տալու համար և այլն:

Պետական տուրքի դրույքաչափերը սահմանվում են գնահատման ենթակա գույքի արժեքի կամ բազային տուրքի նկատմամբ, որի չափը սահմանված է 1000 դրամ (բազմապատիկների միջոցով). օրինակ՝ ոչ առևտրային կազմակերպությունների գրանցման համար՝ բազային տուրքի տասնապատիկի, գույքային պահանջով հայցադիմումների համար՝ հայցագնի 2%-ի (բայց ոչ պակաս բազային տուրքի 150%-ից), ոչ գույքայինի դեպքում՝ քառապատիկի չափով:

Պետական տուրքի գծով կարող են սահմանվել արտոնություններ. վճարումից ազատում, վճարման նվազեցում, վճարման ժամկետի հետաձգում և այլն:

Որոշակի վճարողների համար արտոնություններ կարող են սահմանել.

1. ՀՀ նախագահը (ՀՀ-ում հատուկ կացության կարգավիճակ, հատուկ անձնագիր տալու, նաև հաշվառելու համար),
2. ՀՀ կառավարությունը և ՏԻՄ-երը (պետական տուրքի բոլոր տեսակների գծով վճարողի փոխարեն այն վճարելու միջոցով),

⁴⁷ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենք, ընդ. 27.12.1997 թ.:

3. դատարանները կամ դատավորները (ելնելով կողմերի գույքային դրույթունից),

4. ՀՀ արտաքին գործերի նախարարը, դեսպանը կամ հյուպատոսական հիմնարկի ղեկավարը (ելնելով վճարողի գույքային դրույթունից):

ՀՀ ԿԲ-ն ազատվում է բոլոր տեսակի պետական տուրքերի վճարումից: Պետական տուրքը գանձվում է մինչև համապատասխան ծառայության մատուցումը կամ գործողության իրականացումը: Պետական տուրքի հաշվարկման և գանձման նպատակով գործողությունների կատարման և ծառայությունների մատուցման պահ է ճանաչվում դրանց ավարտման պահը: Պետական տուրքը հաշվարկում և գանձում են ծառայություններ կամ գործողություններ իրականացնող պաշտոնատար անձինք: Այն ճիշտ հաշվարկելու, ժամանակին գանձելու պատասխանատվությունը դրվում է վերջիններիս վրա, իսկ գումարները կանխիկ գանձված լինելու դեպքում՝ դրանք ժամանակին բյուջե փոխանցելու պատասխանատվությունը դրվում է պետական տուրք գանձող պատասխանատու պաշտոնատար անձի վրա: Պետական տուրք գանձող պաշտոնատար անձանց սահմանած ժամկետում բյուջե չգանձված տուրքի գումարները ենթակա են բռնագանձման պետական բյուջե՝ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար 0,075%-ի չափով, հաշվարկված տույժի հետ միասին: Դրանք բյուջե են վճարվում լիազորված մարմնի կողմից համապատասխան ակտի ամսաթվին հաջորդող 10 օրվա ընթացքում:

ՀՀ-ում պետական տուրքը վճարվում է հայկական դրամով: ՀՀ տարածքից դուրս իրականացվող ծառայությունների կամ գործողությունների համար, նաև ՀՀ պետական սահմանի անցման կետերում ՀՀ մուտքի վիզայի տրամադրման համար պետական տուրքերը կարող են վճարվել արտարժույթով:

Պետական տուրքի հաշվարկման և գանձման կարգի պահպանման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են ՀՀ կառավարության լիազորած մարմինները: Պետական տուրքը ենթակա է վերադարձման մասնակի կամ լրիվ (կապված տուրքը նախապես մուծելու և հետագայում այս կամ այն պատճառով *համապատասխան ծառայությունից կամ գործողությունից չօգտվելու հետ):

Ֆինանսական մարմինները պետական տուրքը վերադարձնում են այն բյուջեից, որին հաշվանցվել է գումարը ոչ ուշ, քան սահմանված փաստաթղթերը ստանալուց 30 օրվա ընթացքում:

16. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ ԵՎ ՎՃԱՐՆԵՐ

Տեղական տուրքը ՏԻՄ-երի սեփական լիազորությունների իրականացմամբ պայմանավորված սահմանված գործողությունների համար համայնքի բյուջե վճարվող ավագանու սահմանած պարտադիր գանձույթ է⁴⁸:

Տեղական վճարը ՏԻՄ-երի սեփական լիազորությունների շրջանակներում համայնքի կամ համայնքի պատվերով մատուցած ծառայությունների համար համայնքի բյուջե կամ բյուջեի բաղկացուցիչ մաս կազմող, օրենքի համաձայն բացված արտաբյուջետային միջոցների հաշվին վճարվող՝ ավագանու սահմանած պարտադիր գանձույթ է:

Վճարողներն են նախատեսված գործողություններից և ծառայություններից օգտվող անձինք:

Տեղական տուրքի տեսակներն են.

1. համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների ուժեղացման, արդիականացման, վերակառուցման, վերականգնման և բարեկարգման աշխատանքների թույլտվության համար,

2. շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար,

3. ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար,

4. բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար,

5. առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումներով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվության համար և այլն:

Տեղական վճարի տեսակներն են.

1. շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար,

⁴⁸ «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենք, ընդ. 26.12.1997 թ.:

2. շենքերի և շինությունների կառուցման ավարտն ավարտական ակտով փաստագրման, ձևակերպման համար,

3. ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար,

4. համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ փաստաթղթերի նախապատրաստման համար,

5. համայնքի կողմից աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար և այլն:

Տեղական տուրքերի և վճարի դրույքաչափերը սահմանում է համայնքի ավագանին՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ՝ համայնքի տարեկան բյուջեն հաստատելուց առաջ: Օրացուցային տարվա համար դրանց դրույքաչափերը փոփոխության ենթակա չեն: Բոլոր վճարողների համար սահմանվում են տեղական տուրքերի միասնական դրույքաչափեր:

Տեղական տուրք գանձող պաշտոնատար անձինք հաշվարկն իրականացնում են նախքան այդ գործողությունների կատարումը կամ ծառայությունների մատուցումը, իսկ տեղական վճարի հաշվարկը՝ ծառայության մատուցումից առաջ և (կամ) հետո՝ ելնելով տեղական տուրքի կամ վճարի դրույքաչափերից:

Տեղական տուրք գանձում են նախքան գործողությունների կատարումը և (կամ) թույլտվությունների տրամադրումը կամ ծառայությունների մատուցումը, իսկ տեղական վճար՝ ծառայության մատուցումից առաջ և (կամ) հետո՝ համայնքի ավագանու հաստատած պարբերականությամբ:

Արտոնություններ կարող են կիրառվել ավագանու որոշմամբ: Արտոնությունները համայնքի ղեկավարի ներկայացմամբ սահմանում է ավագանին:

Տեղական տուրքի և (կամ) վճարի ավելի վճարված գումարները ենթակա են վերադարձման վճարողի՝ համայնքի ղեկավարին ներկայացրած դիմումի հիման վրա՝ դիմումը ներկայացնելուն հաջորդող 30 աշխատանքային օրվա ընթացքում: Տեղական տուրքերի և վճարների հաշվարկելու, ժամանակին գանձելու պատաս-

խանատվությունը դրվում է հաշվարկող և գանձող պաշտոնատար անձանց վրա, իսկ հաշվարկելու և գանձելու կարգի պահպանման նկատմամբ հսկողությունն իրականացնում է համայնքի ղեկավարը կամ նրա լիազորած անձը:

Տեղական տուրքերը և վճարները վճարվում են ՀՀ արժույթով՝ հայկական դրամով:

17. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐ

ՀՀ տնտեսության զարգացմանը զուգընթաց, մեծանում է միջազգային հարկային հարաբերությունների նշանակությունը: Հատկապես կրկնակի հարկման հարցերի կարգավորման նպատակով պետությունները կարող են կնքել գույքի և եկամուտների կրկնակի հարկումը բացառելու մասին երկկողմ և բազմակողմ պայմանագրեր:

Միջազգային պայմանագրերը⁴⁹ միջազգային իրավունքի կարևորագույն տարրերից են: Համաձայն «ՀՀ միջազգային պայմանագրերի մասին» օրենքի՝ միջազգային պայմանագիր է համարվում ՀՀ Սահմանադրությամբ, վերոհիշյալ օրենքով և միջազգային իրավունքի նորմերին համապատասխան՝ ՀՀ և օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների կամ միջազգային իրավունքի այլ սուբյեկտների միջև կնքված գրավոր համաձայնությունը, որը ձևակերպվել է որպես պայմանագիր, համաձայնագիր, կոնվենցիա կամ այլ անվանումով փաստաթուղթ, կարգավորվում է միջազգային իրավունքով, սահմանված կարգով մտնում իրավաբանական ուժի մեջ և ՀՀ-ի համար ճանաչվում որպես պարտադիր:

Միջազգային պայմանագիրը կարող է լինել

1. երկկողմ, եթե ՀՀ-ի հետ, որպես պայմանագրի կողմ, հանդես է գալիս միջազգային իրավունքի մեկ այլ սուբյեկտ,

⁴⁹ Ալավերդյան Ա., Հարկ վճարողի սեղանի գիրք, Եր., 2007 թ., էջ 292:

2. բազմակողմ, եթե ՀՀ-ի հետ, որպես պայմանագրի ինքնուրույն կողմեր, հանդես են գալիս միջազգային իրավունքի մեկից ավելի սուբյեկտներ:

Վավերացված միջազգային պայմանագրերը ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են և գերակայում են ազգային օրենսդրության նկատմամբ: Եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան սահմանված են օրենքներով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրի նորմերը (ՀՀ Սահմ., 6-րդ հոդվ.):

Միջազգային պայմանագիր կարող է կնքվել.

1. ՀՀ-ի անունից (միջպետական),
2. ՀՀ կառավարության անունից (միջկառավարական),
3. ՀՀ հանրապետական գործադիր մարմինների, գլխավոր դատախազության, Գիտությունների ազգային ակադեմիայի, ինչպես նաև ԿԲ-ի անունից (միջգերատեսչական):

Միջազգային հարկային պայմանագրերը (համաձայնագրերը) ընդունված է դասակարգել ըստ հետևյալ խմբերի.

1. Բուն հարկային համաձայնագրեր՝
 - ա) ընդհանուր հարկային համաձայնագրեր,
 - բ) սահմանափակ հարկային համաձայնագրեր,
 - գ) հարկային հարցերում վարչարարական օգնություն ցուցաբերելու մասին պայմանագրեր:
2. Համաձայնագրեր, որոնցում ներառված են ինչպես այլ, այնպես էլ հարկային ոլորտին առնչվող հարցեր:

Ընդհանուր հարկային համաձայնագրերում բոլոր այն հարցերն են, որոնք վերաբերում են հարկման, այդ թվում՝ հարկերի գանձման ոլորտում պետությունների միջև համագործակցությանը: Եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին միջպետական և միջկառավարական երկկողմ համաձայնագրերը նպատակ ունեն բացառելու եկամտի և գույքի կրկնակի հարկումը, թույլ չտալու հարկային խտրականության կիրառում

համագործակցող պետությունների միջև, ինչպես նաև փոխանակելու տեղեկատվություն՝ հարկումից խուսափելը կանխելու նպատակով:

Հարկումից խուսափելու դեմ պայքարի արդյունավետ միջոց է իրավասու մարմինների միջև փոխշահավետ և սերտ համագործակցությունը, որն ապահովվում է համապատասխան համաձայնագրերով: Հարկային մարմիններն աջակցում են միմյանց հարցումներ կատարելու, հարկային խախտումները կանխելու և խափանելու, ազգային հարկային համակարգերի և հարկային օրենսդրության ընթացիկ փոփոխությունների մասին տեղեկացնելու, հարկային մարմինների աշխատանքն ապահովող համակարգչային համակարգեր ստեղծելու և կիրառելու ու այլ ուղղություններով:

Այլ հարցերի հետ միասին, հարկային հարցեր ընդգրկող միջազգային պայմանագրերին են վերաբերում.

- առևտրային պայմանագրերը,
- վարկային և դրամաշնորհային համաձայնագրերը,
- դիվանագիտական և հյուպատոսական հարաբերություններ հաստատելու մասին համաձայնագրերը,
- ՀՀ և միջազգային կազմակերպությունների միջև համաձայնագրերը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ հարկային օրենսգիրք: Ընդ. 04.10.2016 թ.:
2. «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքը: Ընդ. 27.12.1997 թ.:
3. «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքը: Ընդ. 26.12.1997 թ.:
4. Հավելված 18, լրաց. 10.10.2014 թ., «ՀՀ «ԵԱՏՄ մասին» 2014 թ. մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրի արձանագրություն՝ «Ապրանքների արտահանման ու ներմուծման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման ժամանակ անուղղակի հարկերի գանձման կարգի և դրանց վճարման նկատմամբ հսկողության մեխանիզմի մասին»:
5. ՀՀ ՊԵԿ հարկային համակարգի բարեփոխումների ծրագիր:
6. ՀՀ 2008-2025 թթ. կայուն զարգացման ծրագիր:
7. ՀՀ 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր:
8. Ալավերդյան Ա., Հարկ վճարողի սեղանի գիրք, Եր., 2007 թ.:
9. Հարությունյան Վ., Հարկեր և հարկազանձում, Եր., 2010 թ.:
10. Հարությունյան Վ., Հարկային քաղաքականությունը և նրա կատարելագործման հիմնահարցերը ՀՀ-ում, Եր., 2003 թ.:
11. Հարությունյան Վ., Հարկային և մաքսային մարմինների գործունեության կատարելագործման հիմնախնդիրները ՀՀ-ում, Եր., 2017 թ.:
12. Մարտիրոսյան Բ., Հարկեր և հարկազանձում, Եր., 2015 թ.:
13. Մելիքյան Մ., Հարկային քաղաքականության տեսական հիմունքները, Եր., 2013 թ.:
14. Алавердян А., Адамян С., Основы налоговой системы Армении, Ер., 2006.
15. Власова М.С., Суханов О.В., Налоги и налогообложение, М., 2016.
16. Кузнецова Н.Г., Налоговая система, М., 2016.
17. Попова Л.В., Дрожжина И.А., Маслов Б.Г., Налоговые системы зарубежных стран, М., 2011.
18. Тарасова В.Ф., Налоги и налогообложение, М., 2018.
19. Черник Д.Г., Налоги и налогообложение, М., 2018.
20. www.gov.am
21. www.petekamutner.am
22. www.arlis.am

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ հարկային վարչարարության 2019-2023 թվականների ռազմավարություն:
2. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 2020-2024 թվականների զարգացման և վարչարարության բարելավման ռազմավարական ծրագիր:
3. Алексейчева Е.Ю., Куломзина Е.Ю., Магомедов М.Д., Налоги и налогообложение, 2017.
4. Лыкова Л.Н., Букина И.С., Налоговые системы зарубежных стран, 2016.
5. Пансков В.Г., Налоги и налогообложение, 2019.
6. Тютюрюков Н.Н., Гурнак А.В., Князева А.В., Налоговые системы зарубежных стран, 2019.
7. Comparative Taxation: Why Tax Systems Differ, Evans Chris, Lymer Andy, Sandford Cedric, 2017.
8. Optimization of the Taxation System: Preconditions, Tendencies and Perspectives, Irina V. Gashenko, Yulia S. Zima, Armenak V. Davidyan, 2019.
9. Tax Guide 2019, David Genders, 2019.
10. What Everyone Needs to Know about Tax: An Introduction to the UK Tax System, James Hannam, 2017.

ՀԱՐՈՒՄԻ ՕՐԵՆՍԱՐԿՐԻՄ ՓՈՓՈՒՆԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՈՒՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՆԸՆՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔ			
Օրենքի հոդված	ՀՕ հոդված	Փոփոխության նկարագրություն	Ժամկետներ
Հոդված 2	Հոդված 186,187,189,194,191	Վերացվել է ՀՀ-ում գրանցված բենժատար ավտոմեքենայի մատչելի ասանակված ճանապարհային հարկը	Ռժ-ի մեջ է մտել սույն օրենքի պատշտմական հրապարակման օրվան հաջորդող օրվանցը և կիրառվում է նաև 2019 թվականի հաշվետու տարվա համար վճարման ենթակա ճանապարհային հարկի գծով հարկային պարտավորությունների վրա
Հոդված 6	Հոդված 16 Մաս 1 1-ին կետ «բ» ենթակետ	ԵՄՏՄ անդամ պետությունից ներմուծված կամ արտահանված ապրանքների հարկման բազաները և վազանված հաշվարկվող ընդունված և ասանակված ընդունված 4ԿԻրպարակված միջին փոխարժեքով	Ռժ-ի մեջ է մտել սույն օրենքի պատշտմական հրապարակման հաջորդող օրվանցը և ստանալով է այդ օրը և դրանից հետո ԵՄՏՄ անդամ պետությունից արտահանման գործարկումների վրա
Հոդված 10	Հոդված 39 Մաս 2	Հասանելիվել է աշխատանքի կատարման կամ ծախսարկայան մատուցման վայրը ՀՀ-ից դուրս համարվելու դրույթը	Ռժ-ի մեջ է մտել սույն օրենքի պատշտմական հրապարակման օրվան հաջորդող օրվանցը
Հոդված 13	Հոդված 55 Մաս 12	Վարկային կազմակերպությունների կողմից մատուցվող ծախսարկայանների գծով ծախսերը փաստաթղթավորվում են հաշվարկային փաստաթղթի միջոցով այլ փաստաթղթերով	Ռժ-ի մեջ է մտել սույն օրենքի պատշտմական հրապարակման օրվան հաջորդող օրվանցը
Հոդված 17	Հոդված 62 Մաս 19	Հասանելիվել է որ վարկերի (փոխառությունների) տրամադրման ծախսարկայանների համար ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում նաև վարկերի (փոխառությունների) տրամադրման պահին միջանվազ գանձվող վարկի (փոխառության) տրամադրման վճարը, վարկի ապաստարկման (այդ բնույթի մոնիտորինգի) համար որոշակի պարտեականություններ գանձվող վճարները, վարկային հայտի ուսումնասիրության համար գանձվող վճարը, վարկային հաշիվների շքանման, վարկման և ապաստարկման համար գանձվող վճարները, որոնք 64-րդ հոդվածի ուժով համարվում են ԱԱՀ-ից ազատված գործարկները	Ռժ-ի մեջ է մտել սույն օրենքի պատշտմական հրապարակման օրվան հաջորդող օրվանցը
Հոդված 18	Հոդված 64 Մաս 2 Կետ 23	ԱԱՀ-ից ազատված գործարկներում աշխատելու է Ազատ տնտեսական գոտու կազմակերպչի և ազատ տնտեսական գոտու շահագործողի համար աշխատանքների կատարումը	Ռժ-ի մեջ է մտել սույն օրենքի պատշտմական հրապարակման օրվան հաջորդող օրվանցը
Հոդված 18,26,42, 53	Հոդված 64 Մաս 2 Կետ 62 Հոդված 108, 112 Հոդված 256 Հոդված 408 Մաս 7	ԱԱՀ-ից և շահութահարկից ազատվել է կազմակերպությունների և ԱՍՀ-ի կողմից ուղևորակազմակերպությունների ծախսարկայանների մատուցումը, միասնական բացառելով դրանք գործունեությունը շրջանառության հարկի դաշտում	2020թվականի հունվարի 1-ից Կազմակերպությունները մատուցումները և սեփական տուրքը
Հոդված 21	Հոդված 74 Հոդված 449	Սահմանվել է ԱԱՀ-ի գումարների փոխհատուցման հնարավորություն ենթակալային վազաններով	Ռժ-ի մեջ է մտել 2019 թվականի հունվարի 1-ից և վերաբերում է 2019 թվականի հունվարի 1-ից սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար հարկային մարմիններին հաշվարկվող ԱԱՀ-ի և անկազմակերպության հարկի միասնական հաշվարկներով առաջարկ ստեղծարարություն օգտագործելու
Հոդված 23	Հոդված 88	Վերացվել է անկազմակերպության հարկի տրոխային դրույթաշահմանը և հաստատվել նոր մեծությունների հիմք ընդունելով անկազմակերպության հարկի հաշվարկման հետևյալ գործակալները 2020թ. - 1.0 2021թ. - 1.03 2022թ. - 1.06 2023թ. - 1.09	2020թվականի հունվարի 1-ից
Հոդված 31	125-րդ հոդվածի 1-ին մասը	Հանրաքարակի դրույթաշահմանը նվազեցվել է և սահմանվել է 18 տոկոս	Կիրառվում է 2020 թվականի և դրան հաջորդող հաշվետու ժամանակաշրջանների համար շահութահարկի հաշվարկման մաստատվելով
Հոդված 31	Հոդված 125 Մաս 4 Հոդված 150 Մաս 8	Օտարերկրյա իրավաբանական և ֆիզիկական անձանց մատչելի շահաբաժիններից համապատասխանաբար շահութահարկի և եկամտային հարկի դրույթաշահմանը սահմանվել է 5 տոկոս	Կիրառվում է 2020 թվականի հունվարի 1-ից հետո ընթացող ժամանակաշրջանների վերաբերյալ (այդ ժամանակաշրջանների համար գործունեության արդյունքում ստացվող) շահութեներից որպես շահութի բաշխում, ժամանակի տեսակով շահաբաժինների վրա
Հոդված 34	Հոդված 147 1-ին մասի 38-րդ կետ	Որպես նվազեցվող եկամուտ է համարվում ցանկացած տեսակի հողմասի օտարումից ֆիզիկական անձի եկամուտները, այդ թվում, հարկային գործակալի օտարումից	Դրույթը կիրառվում է 2020 թվականի հունվարի 1-ից հետո իրավաբանական օտարումն առաջարկների մատուցող եկամուտների նկատմամբ
Հոդված 34	Հոդված 147 1-ին մասի 16-րդ կետ	147-րդ հոդվածի 16-րդ կետում կատարվել է հետևյալ խմբագրությունը: Որպես նվազեցվող եկամուտ է դիտարկվում ֆիզիկական անձանց միջև իրականացվող գույքի առք ու վաճառքի գործարկները, բացառությամբ ֆիզիկական անձանց միջև մեծածախ առևտրի կազմակերպության առևտրա համարվող գույքի օտարումն առաջարկների: Կա համաձայնաբերում: ձեռնարկատիրական գործունեության արտաքին համարվող գույքի օտարում է համարվում անձանց օգտագործման ակտիվների օտարումը, եթե անձանց օգտագործման ակտիվներն անձանց օգտագործման ակտիվներն են և մեք բեռնիցը հետո 385 օրվա ընթացքում	Ռժ-ի մեջ է մտել սույն օրենքի պատշտմական հրապարակման օրվան հաջորդող օրվանցը Ակտիվներն օտարումը վերաբերող դրույթը ստորագրվել է 2018 թվականի հունվարի 1-ից հետո կատարված ակտիվներն օտարումն առաջարկների վրա
Հոդված 35	Հոդված 150 Մաս 15	Վաճառարկված կամ բաժնեհավաք կատարված շենքի, բնակարանի, առանձնատան կամ այլ շինություն (այդ թվում՝ անավարտ (փոխանախմբ) մուկ մասնակցության (բաժնետիրակ, բաժնետիրակ, փայտածրի) կամ ներդրում վկայող այլ արժեթղթերի օտարումից ստացվող եկամուտների մատուցող եկամտային հարկը "20" տոկոսի փոխարեն հաշվարկվում է "10" տոկոս դրույթաշահմանով	2020 թվականի հունվարի 1-ից
Հոդված 35	150-րդ հոդվածի 10-րդ մասը	Չեզոքարկային գործունեության արտաքին համարվող գույքի օտարումն ընթացում եկամտային հարկը հաշվարկվում է ակտիվներն օտարումից գինի 1 տոկոսի չափով, բայց ոչ պակաս, քան յուրաքանչյուր միտարի հաշվով 150 դրամ:	Ռժ-ի մեջ է մտել սույն օրենքի պատշտմական հրապարակման օրվան հաջորդող օրվանցը և կիրառվում է 2019 թվականի հունվարի 1-ից հետո կատարված ակտիվներն օտարումն առաջարկների վրա
Հոդված 35	150-րդ հոդվածում 1-ին մասը	Եկամտային հարկի դրույթաշահմանը են 2020 թվականի հունվարի 1-ից 23% 2021 թվականի հունվարի 1-ից 22% 2022 թվականի հունվարի 1-ից 21% 2023 թվականի հունվարի 1-ից 20%	2020 թվականի հունվարի 1-ից
Հոդված 38	Հոդված 181 Մաս 2 Կետ 2 Ենթակետ «բ»	Եթե տարեկան տեխնիկական զենության փոխարեն սահմանված է տեխնիկական զենության այլ արժեքակատարում, առևտրի հարկային տարվա ընթացքում մեկ տեխնիկական զենություն անցնելու դեպքում, բնապահպանման օրվանցը կատարվում է տարեկան բնապահպանման հարկի գումարի կրկնապատիկի չափով՝ մինչև յուրաքանչյուր տեխնիկական զենությունը	Ռժ-ի մեջ է մտել սույն օրենքի պատշտմական հրապարակման օրվան հաջորդող օրվանցը
Հոդված 40.41	Հոդված 254 Մաս 6,7,8 Հոդված 255 1-ին մաս	Հանրային սնունդ ուտարում գործունեություն իրականացվող հարկ վճարումները օրվան հարկային տարվա ընթացքում գործունեության շուրջ տեսակների մատուցող իրացման շրջանառության 115 միլիոն դրամի շեմը գերազանցելու օրվանցը մինչև այդ օրվան հաջորդող 20-րդ օրը ներառյալ, հարկային սնունդ ուտարում գործունեության իրականացման շարունակելով գործել շրջանառության հարկի հարկման համակարգում, իսկ այլ գործունեության մատուցող կրիտարկվեն ընդհանուր հարկման դաշտում	2020 թվականի հունվարի 1-ից
Հոդված 40.45	Հոդված 254 Հոդված 261	Այսուհետ շրջանառության հարկ վճարող կարող են համարվել նաև անկազմակերպության հարկ վճարողները	2020 թվականի հունվարի 1-ից
Հոդված 44	Հոդված 258 1-ին մասի արդյունք 3-րդ մաս	Նվազեցվել է Հանրային սնունդ կազմակերպման գործունեությունը գրավորների հարկային ընթացքում անկազմակերպության ընդունվող իրացման շրջանառության 6000 դրամի համար և համարյալ 3 տոկոս, բայց ոչ պակաս իրացման շրջանառության 4 տոկոսից	Ռժ-ի մեջ է մտել սույն օրենքի պատշտմական հրապարակման օրվան հաջորդող օրվանցը
Հոդված 46	Հոդված 267 Հոդված 268	2019-ի համար ընտանեկան մեծածախ առևտրային իրացման շրջանառության շեմը "18" մլն-ի փոխարեն սահմանվել է "24" մլն	Ռժ-ի մեջ է մտել սույն օրենքի պատշտմական հրապարակման օրվան հաջորդող օրվանցը Մինչև սույն օրենքի պատշտմական հրապարակման օրը ներառյալ, ընթացող ընթացող տարվա ընթացքում գործունեության շուրջ տեսակների մատուցող իրացման շրջանառության 18 միլիոն դրամի շեմը գերազանցած հարկ վճարումները 2019 թվականի ընթացքում չեն կատարվում և վերականգնվում են մեծածախ առևտրային իրացման շրջանառության օրվանցը
Հոդված 47	56-րդ գլուխ	Ներդրվել է միասնական միկրոմեծածախ առևտրային համակարգ Սուրբկետներ -Սուրբկետի կազմակերպություն, ԱՍՀ և ֆիզիկական անձ (ԱՍՀ չհանդիսանող ֆիզիկական անձինք, անտր և գաղտնի բազաառանց Հայելված 3-ով սահմանված գործունեության տեսակներով) Օրենքով սահմանված է նաև սույն կետի շահագործողները ՕՆԵՎ -Վանկորի հարկային տարվա ընթացքում իրացման շրջանառության 24 մլն դրամի չգերազանցելով Սուրբկետների կողմից հարկերի հաշվարկում - յուրաքանչյուր վազան աշխատողի համար ամսական 5000 դրամի չափով եկամտային հարկ (հաշվարկվում և վճարվում է մինչև եկամտային վճարում(հաշվարկման) ամսական հաջորդող ամսվա 20-ը ներառյալ), ներմուծման մատուցող հաշվարկված հարկեր,բնապահպանման և ծախսարկային հարկեր Հաշվարկվող ներկայացումը մինչև հարկային տարվա վերջերս 20-ը, մինչև պետական գրանցում ստանալու, գործունեությունը վերականգնելու, կրկին ԱՍՀ հաշվարկելու օրվան հաջորդող 20-րդ օրը Ֆիզիկական անձ - Հայտարարության ներկայացման օրվան հաջորդող մեկ աշխատանքային օրվա ընթացքում, հարկային մարմինը տրամադրում է պարտաճանի	2020 թվականի հունվարի 1-ից: Միասնական ուժ կողմում են պարտաճանի հարկի, ինքնաշարժված անձանց և բնապահպանման մեծածախ առևտրային իրացման շրջանառության համակարգը:
Հոդված 51	Հոդված 386 Մաս 3	Վանկորի դրամով վճարում չի համարվում այն վճարումը, որի մատուցողը է օրվա ավարտից մեք բեռնը, աշխատանք ընդունող և կամ ծախսարկային առաջող կազմակերպության, ԱՍՀ կամ նույնառի ՀՀՀ պարտավորող ՀՈՒ	Ռժ-ի մեջ է մտել սույն օրենքի պատշտմական հրապարակման օրվան հաջորդող օրվանցը
Հոդված 53	Հոդված 392 Մաս 1 Կետ 2	Որոշակաբանման ենթակա չեն անմասնատիրական խմբության վաճառքի համար նախատեսված որոշակաբանման ենթակա ապրանքները	Ռժ-ի մեջ է մտել սույն օրենքի պատշտմական հրապարակման օրվան հաջորդող օրվանցը
Հոդված 24,49,64	Հոդված 89 Մաս 2 Կետ 3 Հոդված 343 Մաս 5 Կետ 7 Հոդված 424.1	Անկազմակերպության հարկից ազատվում է անկազմակերպության հարկման ենթակա ապրանքների, հյուսիս նաև կենտրոնացված մատակարարության կազմակերպման շրջանառությունում անմասնատիրական խմբությունում վաճառքի համար նախատեսված անկազմակերպության հարկով հարկման ենթակա ապրանքների մատակարարումը կենտրոնացված մատակարարին	Ռժ-ի մեջ է մտել սույն օրենքի պատշտմական հրապարակման օրվան հաջորդող օրվանցը
Հոդված 66	Հոդված 427 Մաս 1	Նշված հարկային իրավախախտումների դեպքում (հարկային հաշվարկը սահմանված ժամկետից ուշ ներկայացնելը, հաշվարկում սահմանված կարգով չվարկելը, աստիճին գործունեությանը զբաղվելը և այլն) ստուգման ակտերով արձանագրված հարկային պարտավորության կատարման ժամկետ է սահմանվել նշված ակտերի անբողոքարկելի դաշտում օրվան հաջորդող 10-օրյա ժամկետով	Ռժ-ի մեջ է մտել սույն օրենքի պատշտմական հրապարակման օրվան հաջորդող օրվանցը
Հոդված 68	Հոդված 445 Մաս 1 Կետ 9 և 10	Չպահանջվում է հողի հարկի օրենքների մասին եղել երկարաժամկետ է	Նախկին օրենքների դրույթները շարունակվել են որպես նաև 2020 թվականին
		Սեղանակազմակերպող կազմակերպման հետևյալ կերպ՝ ա) 2021 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ներառյալ - մինչև 500000 դրամը ներառյալ աշխատակազմի ընթացքում - 3.5 տոկոս - 500000-ից ավելի դրամի ընթացքում - 10 տոկոս և 32500 դրամի տարբերության չափով բ) 2022 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ներառյալ - մինչև 500000 դրամը ներառյալ աշխատակազմի ընթացքում - 4.5 տոկոս - 500000-ից ավելի դրամի ընթացքում - 10 տոկոս և 27500 դրամի տարբերության չափով	Ռժ-ի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

ԿԱՐԻՆԵ ԱՐՄԵՆԻ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Ֆինանսներ ամբիոնի դոցենտ, տ.գ.թ.

**«Հարկային համակարգ» դասընթացի
դասախոսության նյութեր**

Խմբագիր՝ **Սաթենիկ Ալավերդյան**

Համակարգչային ձևավորումը

և սրբագրումը՝

Ռուզաննա Պեդրոսյանի

5 տպ. պայմ. մամուլ: